ԾԱՂԻԿ կը հրատարակուի Շաբաթ օրերը ։ — Հատը 40 փարա ։

Բաժանորդագին ԿԱՆԽԻԿ — Պոլսոյ համար տարեկան 45 ղրշ. վեցամսեայ 23 ղրշ. եռամսեայ 12 ղրշ. — Գաւառաց համար տարեկան 50 ղրշ. վեցամսեայ 26 ղրշ. եռամսեայ 14 ղրշ.

Ռուսիոյ համար տարեկան հինգ ռուբլի ։ Ուրիշ երկիրներու համար 12 ֆրանք ։

Գաւառներէն դրոշմաթուղթ կ'ընդունուի ։

Միայն երեք թիւ ստացող կը զրկուի . այնուհետեւ բաժանորդագին չը վճարողը կը դադրի թերթ ընդունելէ ։

Ծանուցման տողը 2 ղրշ.

40 փարա

ԾԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿի վերաբերեալ ամէն գործի համար պէտք է դիմել,

Առ ՏՆօրէՆ-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Պոլիս, Էսկի-Զապթիէ, Պէրպէրեան Տպարան

درعلیه‌ده اسکی ضبطیه زقاغنده بربریان مطبعه‌سنده

پالاقاشیان حوونان

HOVNAN PALACACHIAN

Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian

CONSTANTINOPLE

ՆՈՐ ՇՐՋԱՆ — ԹԻՒ 5 | ՇԱԲԱԹ | 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1890

ԴԱՏԱՍՏԱՆ ՀԱՅ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՑ

—

Նիստ Ա.

Երկուշաբթի օր Ոճրադատ ատենին առջեւ տեղի ունեցաւ Մայր Եկեղեցւոյ աւագերէց Տ. Սուքիաս քահանայն սպաննել փորձող Յակոբի եւ իւր ինն ընկերաց դատավարութիւնը, ի ներկայութեան ունկնդրաց խուռն բազմութեան ։

Դատարանին կը նախագահէր Վասըֆ պէյ. անդամք էին Էմին, Հագգը, Եանքօ եւ Մոստիճեան Յարութիւն էֆէնտիք. Ընդհանուր Դատախազ՝ Մէհմէտ պէյ. քարտուղար՝ Ազմի պէյ. փաստաբանք՝ Շէհրի էֆէնտի, Իզզէթ պէյ, Համտի, Հասան Րիզա, Գէորգ Ալիքսանեան եւ Վասիլաքի էֆէնտիք ։

Ամբաստանելոց յատուկ նստարաններու վրայ բազմած էին Պարտիզակցի կառապան Յակոբ Հազարեան՝ որ սեպտ. 14ի շաբաթ օրը Մայր Եկեղեցւոյ մէջ Տ. Սուքիաս քահանայի վրայ ատրճանակ պարպած էր կրօնական արարողութեանց միջոցին, Ակնցի Փերեզակ Փիլիպպոս անուն 22 ամեայ երիտասարդ մը՝ որ Յակոբին զէնք, դրամ, եւն, հայթայթած էր, 22 ամեայ Թեփավաճառ Երիզացի Մինաս՝ որ ոճրագործը պահած էր, Ապուտ էֆէնտի խանի սրճագործ Վանեցի 22 ամեայ Վարդան՝ որ Մինասի մեղսակից եղած էր. ատոնցմէ ի զատ, ատաղձագործ Սեբաստացի Համբարձում 22 տարեկան, Տիվրիկցի հացագործ Նշան 25 տարեկան, Սեբաստացի դարբին Յովակիմ 22 տարեկան, Գարահիսարցի խոհարար Յարութիւն 24 տարեկան, Այնթապցի ոստայնանկ Աւետիս 27-28 տարեկան եւ Պարտիզակցի 21 տարեկան մուճակակար Պետրոս Գէորգեան, ուղղակի կամ անուղղակի առաւել կամ նուազ գործակցութիւն ունեցած էին Յակոբի եւ Փիլիպպոսի հետ, եւ իրենց վրան վնասակար ու գրգռիչ թղթեր գտնուած էին ։

Այս անձինք Ամբաստանիչ ատենի կողմանէ կ'ամբաստանուէին նաեւ իբրեւ անդամ խռովարար ընկերութեան մը, որ կազմուած է Օսմ. Տէրութեան մէկ մասն ամբողջէն բաժնելով՝ Հայաստան անուամբ անկախ կառավարութիւն մը կազմելու չարանիւթ նպատակաւ՝ Հայ ժողովուրդը կայս. կառավարութեան դէմ ապստամբեցնելու, եւ իրենց խօսքերէն չը խաբուող հաւատարիմ հպատակներն սպաննելու եւ անհետացնելու համար ։ Յակոբի, Փիլիպպոսի, Մինասի, Յարութիւնի, Աւետիսի եւ Պետրոսի խոստովանութեամբ ապացուցուած է թէ, իրենք, ինչպէս եւ Վարդան, Համբարձում, Նշան եւ Յովակիմ անդամ են զՀայաստան կազմակերպելու երեւակայական նպատակաւ կազմուած խռովարար ընկերութեան, որ Հայ ժողովրդեան միտքը գրգռելով, զօրք գրելով, մարդ սպաննելով եւ այլ կարգ մը հանրային բարեկարգութեան խանգարիչ արարքներով յեղափոխական ընթացքի մէջ գտնուած է ։

Ամբաստանիչ ատենի տեղեկագիրը կը յարէ.

« Վարդանի ձերբակալման պահուն իւր վրայէն բռնուած են Հայ ժողովուրդը յապըստամբութիւն յորդորելու նպատակաւ ի Մարսիլիա եւ ի Լոնտոն հրատարակուող Արմէնիա եւ Հնչակ լրագրաց թիւեր, որոց ի Թուրքիա մուտքն արգիլեալ է, ինչպէս նաեւ ուրիշ վընասակար թուղթեր ։

« Դարբին Յովակիմի խանութին մէջ ալ խուզարկութիւն կատարուելով, գտնուած են Արմէնիա լրագրոյն բաժանորդ գրուելու համար յիշեալ լրագրոյն խմբագրութեան ուղղուած նամակ մը՝ անծանօթ ստորագրութեամբ, նաեւ Գում-գաբուի դէպքերուն մասնակցող եւ Սպարապետի Դրան զինուորական ատենին առջեւ դատապարտուող խռովարարներէ միոյն՝ Նազարէթի՝ վիճակին վերաբերեալ թըղթակցութեան ստորագրութիւնք ։

« Հացագործ Նշան եւ Համբարձում միջնորդած էին Մաճառ Թօղը բնակող Տիգրանին տունը զրկելու եւ պահելու զՅակոբ, որ Տէր Սուքիաս քահանային վրայ հրացէն պարպած է ։ Նշան՝ յիշեալ Յակոբին պահուած տունը մնալով գիշերն հոն անցուցած է, ըստ խոստովանութեան Նշանի եւ Համբարձումի ։

« Նոյն ատեն մէջ Տէր Սուքիաս քահանային վրայ հրացէն պարպուելու մասին խօսուելով, Նշան ըսած է թէ « Տաճատ վարդապետը վիրաւորող Սահակն ալ երեք օր պահելէն յետոյ Պուլկարիա զրկեցինք », ինչպէս իմաց տուած է Յակոբ ։

« Ամբաստանութիւնն այս ամէն ապացոյցներով հաստատուած լինելով, յիշեալ անձինք ի դատ կը կոչուին, իբրեւ հեղինակ վերոյընշանակեալ ոճրին ։ »

Ընդհանուր դատախազ Մէհմէտ պէյ հետեւեալ յայտարարութիւններն ըրաւ.

« Յակոբ խոստովանած է Թիֆլիս երթալու համար զինուոր գրուած ըլլալը, լուսանկարը հանել տալու համար մի քանի ընկերներու հետ Նարլը-Գաբուի եկեղեցին երթալը, Փիլիպպոսին տուած ատրճանակն ու տասն եւ վեց կտոր յայտարարութիւնն առնելով՝ Նորա հրահանգին համեմատ Սուքիաս քահանային վրայ ատրճանակ պարպելը, թէպէտ գնդակը չէ հանդիպած, եւ յայտարարութիւնները մէկ կողմ նետելն. ոճիրը գործելէ վերջ՝ Փիլիպպոս զանի յէթ-Մէյտանի ամբաստանեալներէն Մինասին տունը տարած է եւ վերջէն ալ Փիլիպպոս, Մինաս եւ Վարդան զինքը Բերա տարած են. խոստովանած է նաեւ թէ Փիլիպպոս ատենապետ էր եւ ինքը պարզ զինուոր ։

« Փիլիպպոս ըսած է թէ տէր Սուքիասը սպաննելու համար Արթինին զրկած Յակոբ անուն անձին զէնք եւ դրամ տուեր է եւ ցըրուելու համար ալ « ըստ պատժ. օրինաց, սուրբ գործին արգելք եղողներուն վարձատրութիւնը մահ է » տողերը նշանակուած եւ ի ստորեւ « Պոլսոյ հայ ապստամբական ժողովք » բառերով ստորագրուած հայ տառերով եւ լեզուով 16 կտոր յայտարարութիւն յանձնած է, եւ թէ Յակոբ՝ տէր Սուքիասի վրայ ատրճանակ պարպելէ վերջ՝ իւր խանութը եկեր ապաստաներ, ինքն ալ Մինասին յանձներ, վերջը, Մինաս եւ Վարդան Թաքսիմի կողմերը տարեր են զՅակոբ ։

« Փիլիպպոսի մէկ ուրիշ յայտարարութեանը համեմատ, Տէր Սուքիասի խնդրէն մէկ երկու շաբաթ առաջ, Արթին, Մինաս, եւ դեռ չը ձերբակալուածներէն Պաղտասար, հովանոցավաճառ Գրիգոր, միասին Սեդրաքին եւ դպրոցական Գրիգորին քով գնացեր են. հոն դպրոցական Գրիգոր իրենց ըսեր է թէ « եթէ կ'ուզէք ընկերութեան մէջ մնալ եւ գործ մը տեսնել, ձեր մէջէն մէկն ընտրեցէք, ես անոր հետ կը տեսնուիմ, եւ եթէ ընկերութեան մէկ հրամանը կ'ըլլայ կամ լրագիրը կուգայ, ձեզ կը զրկեմ ». ասոր վրայ Փիլիպպոսի ընկերները զինք կ'ընտրեն եւ դպրոցական Գրիգորն ալ կ'ըսէ. « Ընկերութեանս կանոնագիրը կը հրամայէ որ լրտեսներն սպաննուին, Տէր Սուքիասն ալ պիտի մեռցնենք, մարդ մը գտէք, այս գործը գլուխ հանենք. Զուիցերիոյ մէջ եղածին պէս ամէն մարդ մէկ պիտի ըլլայ, հարուստ, աղքատ, գիւղացի, ամէնքն ալ հաւասար պիտի ըլլան ». այն ատեն իրենք կը հարցնեն թէ « Խաչիկ էֆէնտի՞ն ալ լըրտես է, ա՞ն ալ պէտք է սպաննել ։ » Գրիգոր կը պատասխանէ թէ « Դուք անոր մի խառնուիք, Տէր Սուքիասը զարնելու աշխատեցէք ։ »

« Ասոր վրայ Փիլիպպոս Արթինը կը գտնէ եւ զանի Յակոբին կը ներկայացնէ. Արթին տէր Սուքիասը սպաննելու համար իւր ատրճանակը Յակոբին կուտայ, Սեդրաքէն առած մէկ ուրիշ ատրճանակն ալ կուտայ, որպէս զի Աւետիսին տայ ։

« Մինաս ալ կը խոստովանի թէ՝ երբ Փիլիպպոս զՅակոբ իւր խանութը բերելով « այս մարդը տէր Սուքիասը սպաննեց, ասիկայ տեղ մը պահէ » կ'ըսէ, կ'առնէ իր տունը կը տանի. վերջէն Փիլիպպոս եւ Վարդան զՅակոբ պահելու համար անկէ առնելով ի Բերա Թագսիմի մօտերը կը տանին ։ Վարդանի համար Փիլիպպոսի եւ Յակոբի ըսածներէն զատ, ձեր. բակալուած միջոցին վրան, Լոնտոն եւ Մարսիլիա հրատարակուող եւ հայ ժողովուրդը գրգռող արգիլեալ հայատառ Արմէնիա եւ Հնչակ լրագիրները գտնուած են որոց երկուքին վրայ « Հնչակեան հայ ընկերութեան ժողով ի Պոլիս » բառերով եւ զինանշանով կնիք մը զարնուած է. Նաեւ ուրիշ կարգ մը գըրգռիչ թուղթեր գտնուած են, որոնք իրեն խռովարար մէկը ըլլալը կ'ապացուցանեն ։

« Նաեւ Արթին, դեռ չձերբակալուող քանի

մը խռովարարներուն անունները իմացուցեր և Կ. Պոլսէն էջմիածին ղրկելէ և հոն զինելէ վերջ, Վանայ կողմերը ապահովութիւնը խախտելու նպատակաւ հայ ժողովուրդէն մի քանիները գրգռեր և զանոնք ղրկելու համար խռովարար ընկերութեան անդամներուն հետ քանի մ'անգամ տեսակցեր է։ Նաև ընկերութեան կողմէ իմաց տրուած անձերը սպաննելու համար մարդիկ պատրաստեր է և Մէրճանի մէջ ներկայ գտնուած և մոռիկ ըրած է անկախ Հայաստան մը հաստատելու նպատակաւ ատենարանութեան մը զոր խռովարարներուն գլխաւորներէն մին ի ներկայութեան Փիլիպպոսի, Մինասի և այլոց արտասաներ է։ Աւետիս ալ յայտարարած է թէ Արթինի առաջարկութեամբ զինուոր գրուելով Տէր Սուքիասը սպաննելու պաշտօն ունեցող Յակոբի հետ չրջելու համար պարտաւորութիւն ստանձներ է. Յակոբ իրեն դաշոյն մը տուեր է, և նորա հետ Փիլիպպոսի խանութ գացած ժամանակ, Փիլիպպոս ալ ատրճանակ մը յանձներ ու պատուիրեր է որ Տէր Սուքիասը սպաննելու համար Յակոբի օգնէ, սակայն ինք կ'ըսէ թէ քահանային վրայ ատրճանակ պարպըուած միջոցին ներկայ գտնուած չէ։

«Պետրոս ալ կ'ըսէ թէ Արիստակէս անուն անձ մը, որ դեռ չէ ձերբակալուած, զինք համոզեր է որ Արթինի քով երթայ. նա զինք Պաթում երթալու համար զինուոր պիտի գըրէ. ի վերջոյ ինքն ալ անունը արձանագրել տալու համար, Արթինի հետ Նարը-գարուի եկեղեցին գնացեր և հոն դեռ մի քանի հոգի ևս գտեր են որոնք յայտներ են թէ իրենց Պաթում երթալն յետաձգուած է։

«Անկէ ելնելով Ղալաթիա եկեր են և հոն, քիչ պեխերով պատանի մը զոր Արիստակէս ճանչցուցած էր իրեն, կ'ըսէ թէ «այս օր քուէ քաշեցինք, քահանան սպաննելու քուէն ինձ ելաւ, դուն ալ միասին պիտի գաս» և ատրճանակ մը կը յանձնէ. կ'ելնեն այդ պատանիին հետ Պոլսոյ կողմը կ'անցնին և երեք օր Սամաթիա և Գուրմ-գարու չրջելէ վերջ, պատանին «քահանան ուրիշը պիտի զարնէ եղեր» կ'ըսէ և ատրճանակն ետ կ'առնէ։

«Հետևաբար, Տէր Նախագահ, կը պահանջեմ որ սոքա հարցաքննուին և դատավարութիւն տեղի ունենայ։»

* * *

Ընդհ. դատախազի այս տեսութեան վրայ կարդն եկած էր ամբաստանելոց հարցաքննութեանց, ուստի Վսեմ. Նախագահն առաջին ամբաստանեալէն սկսելով հետեւեալ կերպիւ հարցաքննեց։

Նախ. — Յակոբ, պատմէ տեսնենք ինչպէ՞ս եղաւ։

Յակոբ. — Առեն մը հիւանդութիւն մը եկաւ վրաս, չէի կրնար աշխատիլ, տեղս մարդ մը դնելով գործէ դադրեցայ. օր մը սիրքէֆի սրճարաններէն մին նստած ատենս, Արիստակէս անուն անձը եկաւ և զիս գաղտնարար դուրս կանչելով, ըսաւ թէ սանկ գոմիթէ մը կայ, զինուոր պիտի ղրկեն, շատ ղրկեցին և դեռ պիտի ղրկեն, դուն ալ կը գրուիս։ Ես ալ «եթէ իրօք այդպէս բան մը կայ, շատ աղէկ» ըսի և անունս գրեց, Համիտիյէս ալ ուղեց առաւ և միասին Արթինին քով գնացինք։ Արթին ըսաւ թէ երեքշաբթի օր քեզի պիտի ղրկենք. երեքշաբթի եղաւ, դացի, միւս շաբթուան յետաձգեցին, օր մ'ալ ըսին թէ քեզ տեղը պիտի տանինք, հոն մեր մեծերը պիտի տեսնեն և պատկերդ պիտի հանենք։ Ուստի Արթինի հետ որոշեալ տեղը դացինք. Գուրմ-գարու սրճարան մը նըստեցանք, սպասեցինք, ոչ եկող կար ոչ գացող. մէկ մ'ալ Ահարոն անունով մէկը եկաւ, կէս ժամ վերջ ուրիշ մ'ալ, ժամէ մը վերջ Պետրոսը եկաւ. ժամանակը կ'անցնէր, երեկոյ եղած էր, մենք պիտի երթայինք, մեզ ըսին որ քանի որ այսչափ սպասեցիք, քիչ մ'ալ համբերեցէք, կարելի է սպասած անձերնիդ կուգան. վերջապէս քիչ մը ալ սպասեցինք, մարդ մը չեկաւ և ահա ոտք ելանք երթալու ես Արթին, Պետրոս և Յակոբ. (Ահարոն իր գործին գացած էր). սոքա մեզ գինետուն մը առաջնորդեցին. ես չէի խմեր, իրենք սկսան խմել, անկէ ելանք ուրիշ գինետուն մը մտանք, հոն ալ խմեցին, բաւական խօսակցեցան. վերջապէս ես գործ ունիմ պիտի երթամ ըսի։ Արթին ալ երթամ էֆէնտիին հարցնեմ քու գործիդ համար, ըսաւ, եւ անկէ իրարմէ զատուեցանք. հետեւեալ օրը Արթին երեւցաւ և «գործը փոխուեցաւ, դուն տեղը չպիտի կրնաս երթալ» ըսաւ. իրեն պատճառը հարցուցի, այսպէս որոշուած է պատասխանեց, մինչեւ որ հրաման չգայ, տեղէդ չպիտի շարժիս, և վերջապէս... դուն Գուրմ-գարուի եկեղեցւոյն քահանայն՝ տէր Սուքիասը պիտի զարնե՞ս, ա՛յսպէս որոշուած է. որչափ որ այս գաղտիարին հակառակեցայ, անկարելի եղաւ զիրենք համոզել. որոշուած է, պէտք է ընես, ապա թէ ոչ քեզի կ'սպաննենք ըսին. ի՞նչ կրնայի ըսել, համակերպեցայ։ Արթին զիս վերեզակ Փիլիպպոսին քով տարաւ, Փիլիպպոս ըսաւ թէ քեզի ստակ կուտանք կը փախցրնենք, մի վախնար, պէտք է այս գործը ընես, վաղը եկուր զէնք առմ. հետեւեալ օրը գացի, վեցհարուածեան ատրճանակ մը և 16 հատ ալ գրուած թղթեր տուաւ, կ'երեւայ թէ ինքը գրեր է, քահանան զարնելէդ վերջ այս թղթերն ալ հոն ցրուէ ըսաւ. 4 5 օր թափառեցայ առանց համարձակելու քահանան զարնել, թէպէտ մէկ երկու անգամ իրեն պատահեցայ. իրիկուն մը նստած կը մտածէի, հայրս տեսայ և իրեն ըսի թէ «հայր, եկեղեցին թուղթ փակցուցեր են, քահանան պիտի զարնեն, իմացա՞ր»։ հայրս բարկացաւ և ըսաւ թէ չ'ըլայ որ այդ տեսակ գործերու մէջ գտնուիս, քու գլուխդ կը կարեմ։ Արթին դարձեալ զիս եկաւ գտաւ և եթէ քահանան չի զարնես, մենք քեզ կ'սպաննենք ըսաւ. Աւետիսն ալ ինձ ընկեր տուաւ. հետը միասին մէկ երկու օր պտըտեցանք. մտածեցի թէ անկարելի պիտի ըլլայ օձիքս ազատել. չէի ուզեր ալ մարդասպանութիւն ընել. քանի անգամ քահանան տեսած էի, բայց բան մը չէի ըրած. մտածեցի կեղծ բան մը ընել. գացի եկեղեցի և ատրճանակը բարձրէն օդին մէջ պարպեցի, այնպիսի ձեւով մը որ մէկու մը չը պատահի։

Նախ. — Եկեղեցին մարդ չկա՞ր։

Յակոբ. — Կար, բայց ես այնպէս մը ըրի որ պարապը դնաց։

— Նախ. Դուն ըսէ՛ տեսնենք, Փիլիպպոս, ի՞նչպէս եղաւ։

— Փիլիպ. Մէկը եկաւ ինձի ըսաւ թէ դուն տաճկաց թաղը բնակելու համար կը կասկածին թէ մի գուցէ լրտես ըլլաս. դնա՛ Օգ-Մէյտանը Արթին մը կայ գաիր, իրեն ըսէ որ դրամ, թուղթ և զէնք պիտի բերեմ քահանայն սպաննելու համար. ես չեմ կրնար երթալ ըսի, զիս վախցուցին քեզ կ'սպաննենք ըսելով, անկարելի եղաւ ինձ դիմադրել, դացի Արթինը դտայ, պէտք եղածը ըսի. Արթինը քահանան սպաննելու մարդ կայ, ըսաւ. դրամ, զէնք և թղթերը իմ խանութս բերին և ինձ յայտարարեցին որ Յակոբ անունով սպէս մարդ մը պիտի դայ, այս զէնքը անոր տուր ես զէնք չի տուի. առաւօտ մը կանուխ Յակոբ եկաւ և զէնք ուզեց, ես ալ ըսի թէ քահանան Երուսաղէմ փախեր է. ո՛չ, պատասխանեց Յակոբ. ես անոր տեղը գիտեմ, ան տեղ մը գացած չէ՛, դուն դրամ ու զէնք տուր, ես անոր գործը կը շինեմ։ Վերջապէս ուրբաթ առաւօտ մ'էր տեսայ որ Յակոբ հեւալով եկաւ. «քահանան զարկի, ե՛լ ինչ պիտի ընես ըրէ, զիս պահէ» ըսաւ. ելանք ճարահատեալ, գահվէճի Վարդանը կը ճանչնայի անոր տարի, «հայրենիքէն նոր եկած է, քանի մը օր պահէ» ըսի. «չատ աղէկ, բայց մեր խանը գիշերը մարդ չի պարկիր, ատոր ուրիշ տեղ մը գտնամ» ըսաւ և առաւ մեզ Նշանին տարաւ. Նշան պահելու համար դրամ ուզեց. մենք հաւանեցանք տալու. 10 մէճիտ ճգած էին ծախքի համար, 120 ղրուշը ասոր ծախք ըրի. հետեւեալ օրը զիս ձերբակալեցին, եղածը այս է. միայն թէ ամբաստանագրի մէջ գրուածին պէս իմ մօտ խռովիչ թուղթեր չի կան, ես խռովարարութիւնը չեմ ընդունիր, զիս այնչափ համոզեցին քահանան զարնելու, չ'ընդունեցի. վերջը սպառնացան իրենց ըսածը ընելու և ակամայ խոնարհեցայ։

Վասիլաքի էֆ. — Ո՞վ էր որ զինքը համոզած էր, արդեօք կը ճանչէ՞։

Յակոբ. — Ո՛չ, չեմ ճանչնար, եթէ գիտնայի առաջուընէ իմաց կուտայի։

Նախ. — Դուն ի՞նչ ըրիր, Մինաս։

Մինաս. — Օր մը Փիլիպպոս ինձի եկաւ ըսաւ, որ մէկը կայ առանց նաւուն վարձքը վճարելու փախեր եկեր է, ադքատ է, պէտք է քանի մ'օր պահենք մինչև գործ մը գտնայ. թող քովդ քանի մ'օր մնայ. ես ալ հաւանութիւն տուի. օր մը կեցաւ. հետեւեալ օր միասին կերակուր կերած ատեննիս, այս մարդը, Փիլիպպոսը ինձի կանչէ ըսաւ. ես ալ գացի կանչեցի, դրամ ուզեց և առաւ. նոյն միջոցին Փիլիպպոսին հարցուցի թէ այս մարդ մինչև ե՞րբ քովս պիտի կենայ, հիմայ պիտի ատենիմ ըսաւ և նոյն միջոցին ես, Փիլիպպոս, Վարդան դէպի Թաքսիմ գացինք, վերջը եկան զիս բռնեցին, ուրիշ բան մը չեմ գիտեր։

Նախ. — Դո՛ւն պատմէ, Վարդան։

Վարդան. — Ամիս մ'առաջ Փիլիպպոս ինձմէ սենեակ մ'ուզեց, ըսի թէ մեր խանը մարդ չը պառկիր. ուրիշ տեղ սենեակ մը կը գտնամ. դնայ, վերջը եկաւ ինձ խմացուց թէ սենեակ դտած է, ալ պէտք չկայ։ Օր մը Յակոբ եկաւ, եկուր միասին տեղ մը երթանք ըսաւ. ելանք, զիս փողոցի մը մէջ տարաւ, «հիմայ ետեւէս մարդ պիտի դայ և մեզ տանի» ըսաւ. իրօք ալ մէկը եկաւ և մեզ պահականոց տարաւ. ուրիշ բան մը չեմ գիտեր, բանէ մ'ալ տեղեկութիւն չունիմ։

Նախ. — Դուն ըսէ՛, Համբարձում։

Համբ. — Նշան ինձի ըսաւ թէ սա մարդը Յակոբին համար) հիւր է, Տիգրանին տունը տար. ես ալ տարի, բայց տունը մարդ չկար, ետ դարձանք. ճամբան Տիգրանին եղբայրը տեսայ, այս ձեր հիւրն է ըսի և անոր յանձնով ես վերադարձայ. այսչա՛փ, ուրիշ ոչինչ։

Նախ. — Այնպէ՞ս եղաւ, Նշան։

Նշան. — Ուրբաթ օր մը ժամը 4ին 5ին Փիլիպպոս խանութս եկաւ և հարցուց թէ զինքը կը ճանչնայի՞. կը ճանչնամ պատասխանեցի. մօրս աղջականներէն ըլլալը

յայտնելէ յետոյ՝ ըսաւ թէ հայրենակիցներէն մին մէկու մը վրայ զէնք պարպած, և թէև գնտակը վրիպած էր, բայց մարդը դատ բացած է, ուստի «մեղք է այդ մարդուն» ըսելով, խնդրեց որ նոյն գիշերը զանի պահեմ. տեղ չունիմ պատասխանեցի. 200 ղրշ. տուաւ։ Ըսի թէ ստակի համար չէր, բայց քանի որ բան մը չկայ և դիպուած մը պատահած էր, թող դայ գիշեր մը մնայ։ Փիլիպոս մեկնեցաւ և իրիկուան Վարդանի հետ Յակոբը ղրկեց։ Տեսայ որ տեղ չունէի, Տիգրանին տունը հիւր ղրկեցի, որովհետև այդ Տիգրանին հաց կուտայի։

Փիլիպ. — Մէկ քանի ղրուշ կուտամ ըսի, և ոչ թէ 200 ղրշ։ Զէնքի խօսք ալ չըրի։

Նշան. — Ժամ կին Տիգրանին տունը գընացի և «անցեալ ըլլայ» ըսի այդ Յակոբին, զոր չէի ճանչեր։ Պատասխանեց թէ բան մը չկար, ի Գումգաբու Տ. Սուքիասի վրայ բէվոլվըր պարպած էր։

Յակոբ. — Քովս եկաւ և ըսաւ. «ի՞նչ օգուտ, պարպեր ես, բայց չես կրցեր զարնել. ո՛ւր էր թէ զարնուէր և դուն ալ ձերբակալուէիր։» Յարեց նաև թէ Սահակ ալ մարդ զարկած և Պուլկարիա ղրկած էր։

Նախ. — Դուն ալ ըսէ, Յովակիմ։

Յովակիմ. — Դարբին մը ինձ ըսաւ թէ կատարուելիք գործ մը կար և առաջարկեց ինձ որ զինքն ալ շահակից ընեմ և ժամ մը յետոյ իւր խանութն երթամ։ Դացի, բայց մարդ չեկաւ։ Դարբինը պատասխանեց թէ գալիք մարդը Շիշլի կողմերը կը պտտի և եթէ հանդիպի, ինձ ցոյց պիտի տայ։ Ես ալ մինչեւ ժամ 12 Թագսիմի կողմերը պտտեցայ և շատ ծխած ըլլալով, դլուխս դարձաւ։ Նշանի խանութը գնացի և նստեցայ։ Պաշտօնեայ մը գիս կանչեց, խանութս դացինք. խուզարկեցին և բաժանորդագրութեան նամակ մը գտնուեցաւ, որ իմը չէր։ Ընկերս Մինաս ամիս մը առաջ հայրենիք դացած էր. արդէն ես զինքը վնտռած էի. նամակի գիրն անոր էր. ինձ հետ սրդոզած ըլլալով մեկնեցաւ. ես մեծ մարդ մը չեմ որ լրագրի բաժանորդ ըլլամ. գտնուած նամակները մեծ մարդոց յատուկ նամակներ են. ինծի կը վայլե՞ն։

Նախ. — Այդ թուղթը դու կարդացի՞ր։

Յովակիմ. — Կարդացի։

Նախ. — Ա՞յն թուղթը, որուն մէջ գրուած էր թէ «գործին կատարման համար կ'աղօթենք»։

Յովակիմ. — Ամէն կողմը չկարդացի։

Նախագահը հարցուց միւս ամբաստանելոց թէ Յովակիմը կը ճանչնայի՞ն։ Ամէնքն ի միասին պատասխանեցին թէ չեն ճանչնար։

Յովակիմ. — Նազարէթ անուն հայրենակից մը ուէինք, որ Մաքսատան մէջ կ'աշխատէր. հօրս հետ ազէկ կը տեսնուէր և առուտուր կ'ընէինք։ Ես ալ այդ պատճառաւ կը տեսնուէի։ Գումգարուի դէպքը պատահած միջոցին այդ Նազարէթն ալ մէջն է եղեր։ Հարցաքննութեանց ատեն Նազարէթ իւր հօրեղբօրը՝ Միքայէլին անունը տուեր է. հայրս Միքայէլին ըսեր է։ Միքայէլ հօրս աղաչեր է գրել ինձ որ ինչ լուր որ առնեմ, իմացնեմ. հայրս ալ ինծի գրեց աղաչեց։ Ես ալ լրագրոյն մէջ հրատարակեալ լուրը ղրկելու համար այս նամակը թէև գրել սկսայ, բայց չաւարտեցի, սակայն պատռելն ալ միտքս չեկաւ։

Նախ. — Խօսէ՛ տեսնենք, Յարութիւն։

Յարութիւն. — Հիւանդացայ և մէկ քանի օր անգործ մնացի։ Այդ միջոցին օր մը սըրճարանը նստած էի, ընկերս Սերաստացի Անդրանիկ, առաջարկեց էջմիածին ղրկել Յովհաննէս անուն մարդ մը, զոր ճանչցեր է ի Սամաթիա աշխատած ատեն։ Ես ալ իմ կողմէս Տիարպէքիրցի Հայրապետի, Վանեցի Վարդանի, Անդրանիկի և Աւետիսի անունները գրեցի և Անդրանիկին տուի։ Եօթը տարին մէկ անգամ էջմիածնայ մէջ գումարումներ կ'ըլլան և արարողութիւնք կը կատարուին. ասոնք բարի գործ մը ընելու համար ստակ տալով այդ մարդիկը կը ղրկէին։ Ասոնցմէ զատ, Աւետիսին ընկերը Ակնցի Նիկողոսին համար խօսեր է Վարդանին, և Նիկողոս ալ յանձն առեր է երթալ։ Մէկ քանի օր յետոյ Եէնի Ճամի գնացի, ուր ամէն ատեն կ'երթայի հայրենակիցս տեսնելու և նամակ առնելու համար։ Մեր դրացին Յակոբ, որուն տունը Սամաթիա է, ինձ ըսաւ. «Մարդ կը ղրկեն եղեր. երեք մարդեր ալ իմ քովս կան. աղաչեցին որ իրենք ալ ղրկուին։» Պատասխանեցի թէ պիտի ընդունի՞ն կամ ոչ, չեմ գիտեր, և այդ մարդոց անուանց ցանկն ուզեցի. մէկ քանի մարդոց անունները գրեցին տուին։ Յետոյ սրճագործ Արիստակէս այս գործը կարգադրեր է Գումգաբուի դէպքին մէջ գտնուող Արթին Ճիհանկիւլեանի հետ։ Զիս ալ տարին ու «այս ալ պիտի երթայ» ըսին։ Այդ մարդոց մէկ մասն, որոյ մէջ կան նաև անոնց գրածները, Զմիւռնիա ղրկեր են։ Անոնք գացին և եկան։ Այն մարդերն, որոց անունները գրած էի, ինձ ըսին թէ զիրենք գրած ու ղրկած չէին։ Ես ալ պատասխանեցի թէ ղրկողները վաղը կամ միւս օրը կ'ըսեն և թէ կարծեմ ես մնացողներու հետ պիտի ղրկեն։ Միւս կողմէ կը կարծէի թէ չոգենաւն ուխտաւորներով լեցուելուն համար կ'սպասէին։ Յովհաննէսին գացի և տեղեկութիւն ուզեցի. պատասխանեց թէ երեքշաբթի օրը պիտի երթան։ Ասոնք ալ գիտնալով որ պիտի երթան, գործերնին ձգեր են։ Շաբաթ և մինչեւ իսկ երկուշաբթի գիշեր բան մը չկայ։ Յովհաննէսին հարցուցի թէ անցագիր հանել հարկ էր, մէկ օրուան մէջ ի՞նչպէս կարելի էր այդ գործերը կատարել. պատասխանեց թէ զինքը մարդու մը պիտի տանի, որպէս զի ինչ որ պէտք է ընէ։ Այս միջոցին Արիստակէս եկաւ և ինձ ըսաւ. «Այս մարդոց գործէն ըլլալուն պատճառ եղանք, եթէ չը ղրկես, դքեզ պիտի զարնեն։» Ես ալ կէս գիշերուն Սամաթիա գնացի և Յովհաննէսը փնտռելով չգտայ։ Այս գործին մեծը Սամաթիոյ դինեատան խոհարարն է։ Յովհաննէս ինձ նկատմամբ տեղեկութիւն տուած էր անոր։ Խոհարարն երբ զիս տեսաւ, առաջարկեց որ ըսելիքս իրեն ըսեմ։ Ես ալ խնդիրն իրեն պատմեցի. պատասխանեց թէ Գումգաբուի դէպքէն ի վեր կրօնականներն անգամ այդ կողմերը ղրկելը դժուարացած է, առաջարկեց որ յաջորդ օրը իրեն երթամ. գացի։ Այդ խոհարարը՝ Ստեփան, գիս առաւ և Շուկային մէջ Ստեփան աղայի խանութին առջեւէն անցուց։ Պարտէզ ունեցող սրճարան մը տարաւ գիս և ինք գնաց տեսնուիլ Ստեփան աղայի հետ, յետոյ վերադարձաւ՝ ձեռքն ունենալով ջուրի խողովակի նման երեք խողովակներ։ Նայեցայ որ անկեղծութիւնը վերցաւ. մտածեցի թէ ի՛նչ պիտի ըլլար. ըսի թէ այսչափ ատեն է կ'աշխատիմ. Յովակիմ (հաւաքիչ) որ չարաթն երեք չորս անգամ կուգար, հիմա չգար, ի՞նչպէս պիտի ըլլայ։ Պատասխանեցին ինձ ըսելով. «Այսօր գնա՛. կարելի է Յովհաննէս վաղը կուգայ քեզ տեսնել»։ Հետեւեալ օրը Ստեփան աղայի 22 թիւ խանութը գացի և ըսի թէ «վերջապէս ի՞նչ պիտի ըլլամ. գլուխս փորձանքի հանդիպցուցին. դուք հանգիստ էք, ես տանջինք օրէ ի վեր անօթի իմ։» Պատասխանեց թէ ուրիշ տեղ մը կար, հոն պիտի երթար. գնաց, վերադարձաւ և ըսաւ թէ անոնց քով ստակ չկար։ Ուրիշ տեղ մըն ալ գնաց, անկից ալ ետ դարձաւ և ըսաւ թէ այժմ հարիւրին ութսուն յոյս մը կար։ Խնդրեցի որ պէտք եղածը շուտով ընեն, վասն զի կեանքս վտանգի մէջ էր։ Անկից յետոյ մէկ քանի անգամ անոր խանութը գնացի, սակայն չկրցի տեսնել. այլ և այլ պատրուակաւ ժամանակ անցուց և ես ալ չկրցայ ազատիլ այն մարդոց ձեռքէն, որոց անունները գրած էի։ Իմ խօսքերուս չհաւատացին, և պահանջեցին ինձ հետ անոր երթալ։ Ես ալ զանոնք Ստեփան աղայի ցոյց տուած Քէրիքիչ խանը տարի. ասոնք դրան առջեւ կեցան։ Ստեփան աղա երբ դրան մօտենալով զանոնք տեսաւ, անմիջապէս փախաւ։ Իրեն խանութը գացի և չգտայ, սակայն քիչ յետոյ կրցայ գտնել։ Ստեփան աղան «այս ընթացքովդ զիս ձեռք ձգել պիտի տաս, խանութդ գնա՛, ուր կարճահասակ դեղին պեխերով Մաքսուտ անուն ժամագործ մը պիտի գայ քեզի։ Հետեւեալ օրը այս տեսակ մարդ մ'եկաւ և ըսաւ թէ ընկերութիւնն ստակ չունէր։ Նորէն Ստեփան աղայի խանութը գնացի և ըսի թէ ա՞յս էր ըսելիքը։ Ստեփան աղա պատասխանեց. «գերեզմանս բաց է, ամէնքդ ալ ձեռք պիտի տամ։» Ես երբ թուղթերն առնելու համար Յովհաննէսը գտնելու գնացեր էի, մարդ մը իմ խանութս եկեր և զիս փընտրեր է։ Փերեզակ Միհրանին քովը եղող Սարգիս անուն մարդ մը ճանչցեր է այդ մարդն և միասին զիս փնտռեր են, սակայն չը կրնալով գտնել, զիս հարցնող մարդն ըսեր է թէ հետեւեալ օրը պիտի գայ և մեկներ է։ Սարգիս ինձ իմաց տուաւ այդ մարդուն գալը և հետեւեալ օրը մէկտեղ Իսքէնտէր Պօղոսը անուն տեղը խան մը գացինք, Սարգիս ինձ պատուիրեց հոն կենալ և ինք գնաց մարդ մը կանչելու. այդ մարդ եկաւ և ըսաւ թէ մարդեր կը ղրկենք եղեր. պատասխանեցի թէ զիս խափած էին և թէ ես չէի ղրկուր։ Ասոր վրայ այդ մարդուն հետ որոշեցինք կիրակի օրը գտնուիլ Նարլը Քարուի եկեղեցւոյն մօտ գտնուած պարտէզ ունեցող սրճարանը և նոյն օրը հոն իրար գտանք։ Այդ մարդն ըսաւ թէ Արթին Ճիհանկիւլեան, որ ընկերութենէն էր, մեկնած ըլլալով, անոր տեղ Վանեցի Վարդանը կարգուած էր։

Վարդան. — Հազար հատ Վանեցի Վարդան կայ։

Յարութիւն. — Վարդանին հետ պիտի տեսնուէինք, Յովհաննէս եկաւ և ըսաւ որ իրեն նամակ եկած էր թէ ուրիշ տեղ մը պիտի ղրկեն։ Ասոր վրայ զիս առաւ և կառապան Ահարոնին մօտ տարաւ։ Ահարոնի մարդն ըսաւ որ հետեւեալ օրը Սամաթիա երթանք, ու գնացինք։ Իքի Քարուլը սրճարանին մէջ Ահարոն մեզ կ'սպասէ եղեր։ Ըսի թէ տակաւին այդ մարդը եկած չէ, ըսելիքդ ըսէ, այս մարդիկ կ'սպասեն։ Ահարոն մեզի մէկ քանի գաւաթ խմցնելով ճամբու դրաւ։ Հետեւեալ օրն ալ բան մը չեղաւ։ Օր մը Սեդրաք անուն մարդ մը եկաւ էթ Մէյտանին և ինձ ըսաւ. «Ընկերութիւնն ամիսէ մը ի վեր քեզ կը փընտրէ, Յարութիւնը դո՞ւ ես». «Այո՛» պատասխանեցի։ Եւ Սեդրաք իրեն ալ ընկերութեան անդամներէն ըլլալը յայտնեց։ Ես ալ

իրեն ըսի թէ թուղթերը չէի կրցած առնուլ։ «Իմ մեծիս խմաց տամ» ըսելով մեկնեցաւ։ Սեդրաք դարձեալ եկաւ և ըսաւ թէ խօսած էր մեծին հետ, որ պատասխանած էր թէ այդ մարդերը իւր տրամադրութեան ներքեւ պիտի առնու զիս ազատելու համար։ Փերեզակ Փիլիպոսին քով գացի և ըսաւ թէ ով որ մառնութիւն ընէ և ընկերութեան արգելք ըլլայ, պիտի սպաննուի։ Ես ալ պատասխանեցի թէ երթամ իմ մարդոցս այս հրահանգն հաղորդեմ. տեսնեմ պիտի ընդունի՞ն թէ ոչ։ Յակոբին, Պետրոսին և այլոց հարցուցի. Պետրոս «Չեմ ուզեր» ըսաւ, իսկ Յակոբ ըսաւ թէ զիրենք այսչափ խաբած էր և թէ մինչև որ ըէվոլվէրով չը զինուէր, չը պիտի հաւատար։ Յետոյ Փիլիպոսի ազդարարութեամբ իմ տրամադրութեանս ներքև գտնուած երկու Յակոբներն առնելով, իրեն՝ Փիլիպոսին տարի։ Փիլիպոս ըսաւ թէ իրեն մեծին ցոյց պիտի տար, թէ ասոնք երդում պիտի ընէին և թէ իրենց զէնք և օրական պիտի արուէր։ Ես ալ իրենց հաղորդեցի. ընդունեցան և գացին։ Յետոյ Փիլիպոսը տեսնելով հարցուցի թէ ի՞նչ եղած էր. պատասխանեց թէ տէր Սուքիաս Երուսաղէմ փախած էր, թէ պիտի հասկնային և եթէ հոս է, պէտք եղածը ի գործ պիտի դնէին։ Յետոյ Փիլիպոս ըէվոլվէրս փամփուշտ տուեր է, քահանայն ցոյց տուեր և այլն ըրեր է, ասոնց վրայ տեղեկութիւն չունիմ։ Փիլիպոս յետոյ մարդ մը եւս ուզեց. Աւետիսը ցոյց տուի, որուն պատուիրեցի Փիլիպոսի խառնուիլը երթալ՝ հետը տեսնուելու համար։ Դիշեր մը յետոյ Անդրանիկ, Փիլիպոս ու ես Մերճան գնացինք և հոն Պաղէլի սրճարանին կից խանէ մը ներս մտանք։ Վերի յարկը սենեակ մը ելանք. հոն կային Սեդրաք և ուրիշ մէկ քանի մարդեր. մէջտեղը խաղի թուղթեր կային, կաւիճով գետնին վրայ գիծ մը գծեցին։ Փիլիպոս իւր խօսքն հոն գտնուող Գրիգոր էֆէնտիին ուղղելով ըսաւ. «Կարգը քուկդ է, խօսէ՛»։ Գրիգոր էֆէնտի, որ մեծերնին էր, սկսաւ քարող խօսիլ հետեւեալ կերպիւ.

«Ո՛վ որ մեր ընկերութեան դէմ կը դնէ, պիտի սպաննուի. Հայաստան տասնեհինգ օրէն պիտի ազատի. հարուստ ու աղքատ, ամէն ոք հաւասար պիտի ըլլայ. ամէն ոք պիտի օգտի ջուրէն, հողէն ու արեւէն. ի Լոնտոն և ի Ֆրանսա այսչափ մարդիկ անօթութենէ կը մեռնին. Եւրոպայի մէջ ժողովոյ մը համար ընտրուած նախագահն առ նուազն հինգ տարի կը մնայ. այն նախագահն որ օրինաց դէմ կը շարժի, պէտք է վար առնուի։ Ով որ ալ ըլլայ, այն որ աղքատը նեղելով հանգստութեանը կը նայի, պէտք է վար առնուի։ Ֆրանսայի մէջ այսչափ զինուորներ և Թուրքիոյ մէջ այսչափ պահականոցներ ու ոստիկաններ կան. անոնք ինչո՞ւ ըլլան. պահպանութեան համար մէկ պահականոցը բաւական է։»

Այս միջոցին դատաւորք պահ մը հանգըստանալու համար սրահէն մեկնեցան և քառորդ մը յետոյ վերադառնալով, դատաւորութիւնը վերսկսաւ։

Նախ. — Խօսէ՛, Աւետիս։

Աւետիս. — Փիլիպոս ինձ ըսաւ որ Գումդաբու երթամ և հոն պատիմ Յակոբ անուն մարդու մը հետ. գացի Յակոբը գտայ և մինչև իրիկուն պատեցանք։ Յակոբ նոյն օրն ինձ երեք քառորդ մէճիտ տուաւ և խանութս դարձայ։ Հետեւեալ օրը Յակոբին միացայ և դանակ մը տուաւ ինձ. հարցուցի թէ ի՞նչ էր. պատասխանեց թէ քահանայն պիտի զարնէր և թէ այդ դանակն ալ պէտք էր իմ քովս մնար։ «Տեսնենք ի՛նչ պիտի ըլլայ» ըսելով ի Գումդաբու սրճարան մը գնացինք։ Քահանայն նոյն միջոցին կ'անցնի եղեր. Յակոբ ըսաւ թէ այն քահանան է։ Իրիկուան խառնութիւն եկայ. ըէվոլվէր մը բերին. հետեւեալ օր Յակոբ եկաւ և ոտակ տուաւ. ուրբաթ օրը արշալոյսին ելայ. մարդ մը եկաւ և քովս գտնուած դաշոյնն ու ըէվոլվէրն ուզեց. տուի եւ առաւ գնաց։ Ուրիշ բանէ տեղեկութիւն չունիմ. այսչափը միայն գիտեմ։

Պետրոս. — Վէզիր խանի մէջ կ'աշխատիմ։ Օր մը Թավուզ Բաղար գայի և Արիստակէս անուն մարդու մը հանդիպեցայ. հարցուց ինձ թէ Հա՞յ եմ. հաստատական պատասխան տուի. ըսաւ թէ ինք մեծ մը ունէր և զիս անոր պիտի ներկայացնէր. Եէնի Ճամի ծրարման մը գացինք և իւր մեծը՝ Արթին, եկաւ։ Ինձ ըսաւ թէ այս մարդը զիս զինուոր պիտի գրէ։ Ասոր վրայ Արթինի հետ ճամբայ ելանք։ Ճամբան Արթին մեզմէ բաժնուեցաւ ըսելով որ իւր մեծէն ոտակ պիտի առնուր անցագրերը պատրաստելու համար և միանգամայն յարեց որ կիրակի առաւօտ Նարլը-Գարուի եկեղեցւոյն շրջակայքն երթանք, ուր իւր մեծը մեր լուսանկարները պիտի հանէ և զմեզ պիտի արձանագրէ տուփերին մէջ։

Նոյն առաւօտուն երբ եկաւ զիս առաւ և կ'երթայինք, ճամբան ուրիշ մարդեր եւս ելան. Նարլը-Գարու գնացինք. Արթին տեղ մը գնաց ու վերադառնալով մէկ քանի մարդոց հետ տեսնուեցաւ. յետոյ մէկ քանի մարդոց հետ Սամսթիա գինետուն մը գացինք. սակայն չեմ գիտեր թէ ի՛նչ էր. իրիկուն եղաւ և ետ դարձանք. հետեւեալ օրն Արիստակէս եկաւ և ըսաւ թէ ուրիշ տղու մը հետ պիտի ղրկէին. մէկտեղ Դալաթիա Եէնի Տիւնեա գինետունը գնացինք, սպասեցինք, տղան չեկաւ և երբ վերադառնալու վրայ էինք՝ այդ տղուն հանդիպեցանք. տղան ըսաւ թէ ինք չպիտի երթար, որով ինձ ալ ըսին թէ իմ տեղը դառնամ. Երբ տեղս կ'երթայի, տղան եւեւէս եկաւ և զիս տարաւ Դալաթիոյ մաքսատան մօտ գինետուն մը։ Հոն ըսաւ թէ քուէն իրեն ինկած էր և թէ քահանան ինք պիտի սպաննէր և առաջարկեց ինձ մէկտեղ երթալ. թէև չուզեցի երթալ, սակայն սպառնացաւ զիս սպաննել՝ եթէ զինքը ձերբակալել տամ. վախցայ. տղան ըռնութեամբ վեցհարուածեան մը ինձ տուաւ և միասին Գումդաբու գնացինք. ճամբան ես բացէն կ'երթայի, վնաս չգալու համար։ Գումդաբուէն վերադարձանք առանց բան մը ընելու։ Մէկ քանի օր յետոյ տղան տեսայ և ինձ ըսաւ թէ ինք այդ գործէն ազատած էր և թէ քահանան ուրիշի մը կողմէ պիտի ըսպաննուէր. ասոր վրայ ես ալ իմ գործիս գացի։

Յարութիւն. — Աւետիս ու Սարգիս մէկտեղ եկան և միասին Յակոբին սենեակը գացինք։ Արիստակէս հոն ինձ ըսաւ թէ ասոնք պէտք էր ղրկէ, որովհետև թէ՛ զինքն և թէ՛ զիս պիտի զարնէին։ Վէզիր խան գացինք, հոն ըսի այդ մարդոց որոց խօսք արուած էր, թէ ես յանցանք մը չ'ունիմ. ինչ որ ինձ ըսած էին, ես զայն հաղորդած էի իրենց։ Անկից Դալաթիոյ մաքսատան մօտ գտնուած գինետունը գնացինք։ Հոն ասոնք ըսին որ եթէ իրենցմէ երաշխաւոր կ'ուզէին, պատրաստ էին տալ, այսչափ սենեկասպահներ կը ճանչնային և միանգամայն ըսին թէ նախապէս Ճիհանկիւլեանի մասնախումբին մէջ ևս գտնուած էին։

Աւետիս. — Չեմ ընդունիր։

Յարութիւն. — Աւետիս ըսաւ թէ դանակը ոսկորին դպաւ և եթէ պիտի մեռնէին՝ օր առաջ մեռնելով ազատէին. ես պատասխանեցի թէ այդ տեսակ բան մը չըլլար, թէ իմ ձեռքս բան մը չկայ և թէ եթէ ոտակ ունենայի՝ հայրենիքս կ'երթայի։

Աւետիս. — Սրճարանէն գինետուն գացինք, ուրիշ մարդ չտեսայ. բանէ մը տեղեկութիւն չունիմ. միայն Արիստակէս զիս այս Արթինին ցոյց տուաւ։

Յարութիւն. — Եէնի Ճամի մօտ ես անոր հետ չտեսակցեցայ։

Փիլիպոս. — Աւետիս Յակոբին հետ չէր. չեմ գիտեր թէ Նախապէս ընկերութեան մէջն էր թէ ոչ։

Աւետիս. — (Հարցման մը պատասխանելով) Չեմ գիտեր թէ ըէվոլվէրն ո՛վ տուաւ. մանաւանդ չեմ գիտեր թէ ինչո՛ւ տուին. ոտակը Փիլիպոս վճարեց։

Փիլիպոս. — Ոտակն ինչպէս որ առի այնպէս տուի։

Աւետիս. — Յակոբ երբ ինձ ոտակ տուաւ, չընդունեցայ, որովհետև այդ գործին փափաքող չէի։

Ասոր վրայ 16 թուղթերէ մին ամբաստանեալներէ Մինասի կարդալ և բառ առ բառ թարգմանել տրուեցաւ։ Թուղթին վրայ իբրեւ որոշում գրուած էր. «Ըստ տրամադրութեան պատժական օրինաց, սուրբ գործին արգելք եղող լրտեսներու պատիժը մահ է։»

Վարդան՝ սենեակը գտնուած թուղթերը Մինասի ցոյց տուեալով, թէև ուրացաւ, սակայն դատարանի քարտուղարը կարդալով սորա ձերբակալման վերաբերեալ ոստիկանական օրագիրը, հաստատուեցաւ թէ Մինաս, ձերբակալուած պահուն, խանի նկուղին մէջ ծրար մը նետած էր և թէ այդ ծրար առնուելով տեսնուած էր թէ վերոյգրեալ նամակներն ու լրագիրները կը պարունակէ։ Ասոր վրայ Վարդան շարունակեց ուրանալ։

Օրը տարաժամած ըլլալով, դատն ուրիշ օրուան յետաձգուեցաւ։

Ամբաստանեալներէ Յակոբի, Յարութիւնի և Աւետիսի փաստաբան Շէհրի էֆ. անձնական տկարութեան պատճառաւ հրաժարած ըլլալով, հարցուցեցաւ ամբաստանելոց թէ իրենք մէկը ունի՞ն որ իրենց փոխանորդութիւն ստանձնէ. մերժողական պատասխան տուին։ Ասոր վրայ այդ ամբաստանելոց փոխանորդ կարգուեցան Հասան Բիլա, Վասիլաքի ու Ալիքսանեան Գէորգ էֆէնտիները։

«ԾԱՂԻԿ»ի ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Զմիւռնիա. Շ. Գրեցինք արդէն որ Ձեր առաջարկութեան մասին ուշացած էինք. արդէն իսկ տրուած որոշումը չ'ենք կարող փոխել. ուստի Ձեր վերջին նամակը կարդալէ յետոյ, Ձեր հոգածութեան մասին շնորհակալութիւն յայտնելով հանդերձ, կը խնդրենք որ ղրկուածները մեր գործակալին յանձնէք։

Կիւմիւշխանէ. Ց. և Ա. Ձեր երկուքին հասցէին մէկ օրինակ միայն կ'ուզէք ստանալ «Ծաղիկ»էն թէ՛ երկու օրինակ. կը խնդրուի ճշդել։ Առ այժմ երկու օրինակ ոսկանք ղրկել Դրամի փոխարէն նամակագրում կ'ընդունինք։

Կարին. Մ. Շնորհակալութիւն։

Խարբերդ. Յ. և Ե. Շնորհակալութիւն։

Պոլիս. Լ. Մ. Ձեր պատասխանն առ պ. Դ. Նիկողոսեան՝ յաջորդ թուով։

Խասգիւղ. Ե. Ձեր «Երուանդ»ը, Մանրամէպ տեղական կեանքէ, կը հրատարակուի իւր կարգին։

Գասբ.գիւղ Պ. Դրկեցէ՛ք, տեսնեմք. եթէ «Ծաղիկ»ի համար յարմար գտնեմք, մեծ առ մեծ կը հրատարակեմք։

ՊԱՏՄԱԿԱՆ

—

ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Միջին դարու մէջ, երբ Եւրոպա թանձր խաւարի մէջ թաղուած էր, յԱրեւելս փայլուն քաղաքակրթութեան մ'արեւը կը շողար։ Արաբական քաղաքակրթութիւնն էր այն, — ծնունդ իսլամական կրօնին, որ երկար դարերէ ի վեր իրենց անապատաց մէջ ցիր եւ ցան վրանաբնակ ապրող արաբ ցեղերն ի մի ազգ ձեւացուցած եւ իրենց հայրենիքէն դուրս հանելով զաշխարհ նուաճելու առաջնորդած էր։ Նոր կրօնին ազդած աւիւնովն խանդավառ, Արաբք փոթորկի պէս սուրացած, կայծակի արագութեամբ հեռաւոր երկիրներ հասած, յաղթութենէ յաղթութիւն սլացած եւ մէկ դարու միջոցին մէջ Ինդոսի եզերքներէն մինչեւ Ատլանտեանի ափունքն միակ Աստուծոյ մը հաւատոյն հետ իրենց իշխանութիւնը տարածած էին։ Այս զարմանալի աշխարհակալութեան հետեւեցաւ նշանաւոր ծաղկում մը արուեստից, գիտութեանց, դըպրութեանց, վաճառականութեան, այնպէս որ չիջեալ հռովմէական քաղաքակրթութեան ջահը կ'արծարծէր վերստին շնորհիւ գեղասէր ու գիտասէր Խալիֆայից։ Խօլան դաշտեր ծածկուեցան ազգի ազգի բոյսերով, յորոց բրինձ, բամբակ, շաքարեղէգն, քրքում, կանեփն, նարինջենին, կիտրոնն, արմաւենին, եւ այլք, Արաբաց ձեռքով առաջին անգամ կը մտնէին յԵւրոպա։ Այնքան մեծ էր Արաբ իշխանապետաց երկրագործութեան տուած [illegible] որ ժամանակագիրք կ'ըսեն թէ «Ալ-Հաքէմ Բ. նիզակներն ու սուրերն բըրիչի ու հողաստանի փոխարկեց», թէ «Եւրեւելի չէյխեր փառք անձին կը համարէին անձամբ մշակել իրենց պարտէզներն, եւ Գատըներ ու Ալֆաքիներ հաճոյք կը գտնէին իրենց այգիներու անդորրաւէտ ստուերին մէջ։» Եգիպտոսի, Սուրիոյ, Բաբելաստանի, Սպանիոյ կլիմայից չորութիւնն չէր խրտչեցըներ հնարիմաց Արաբներն, որք առուներու միջոցաւ ոռոգման ճարտար դրութիւն մը կ'ստեղծէին, հորեր կը պեղէին, պարգեւ կը խոստանային անոնց որ աղբիւր մը գտնէին, եւ այսպէս անբեր ամուլ կարծուած դաշտեր նոցա ձեռքին տակ կը դառնային բազմաբեղուն ծաղկալից դրախտներ։ Արուեստք կը զարգանային մահմետական պետութեան քաղաքաց մէջ, եւ յԵւրոպա մտնելով կը լինէին հիմունք այսօրեայ արեւմտեան ճարտարութեան։ Ի Դամասկոս կը գործուէին ազգի ազգի կերպասք, դիպակք, ոսկեթելք եւ մետաքսեայք, ի Մուսուլ շղարշք թափանցիկք բարակամանք, Փոքր-Ասիոյ լեռներուն մէջ օթոցք (գորգք) թանկագինք։ Սըմրղանդի եւ Պաղտատի թղթագործարաններէն մտաւ յԵւրոպա թղթաշինութիւնն. Ի Պաղտատ կը շինուէր նաեւ շաքարն. տեղերահռչակ եղան սուսերք Դամասկոսի եւ Տոլէտի. Գորտովայի կաշին ու Մարոքի այծեմորթն, այնպէս որ ցայսօր Գաղիացիք կօշկակար ըսելու համար կը գործածեն cordonnier բառն որ կուգայ Սպանիոյ Cordoue քաղաքին անունէն, եւ այծեմորթ ըսելու համար կը գործածեն maroquin բառն որ կուգայ Ափրիկէի Մարոք երկրի անունէն։ Պաղտատի եւ Սուրիոյ ապակեգործարանաց մէջ կը շինուէին արծնեալ ապակին (մինէ) եւ ալունք (պունճուք)։ Ծովային եւ ցամաքային գործօն վաճառականութիւն մ'այս ընդարձակ պետութեան մասերն իրերաց հետ եւ օտար երկրաց հետ կը կապակցէր։ Խնկեղէնք, համեմք եւ փղոսկրով բեռնաւորեալ արաբ նաւք Հնդկաստանէն կը հասնէին ի Պասրա, յոր կուգային նաեւ նաւք Չինացւոց՝ առնուլ շաքար, ապակեղէն, վարդաջուր, բամբակ. իսկ Վենետիկի, Ճենովայի եւ Բիզայի վաճառական նաւք կ'երթային Աղեքսանդրիոյ նաւահանգիստն՝ առնալ ծանրագնի Արեւելեան կլիմայի ու ճարտարութեան խընկահոտ ու հրաշալի արդիւնքներն։ Ցամաքի վրայ կարաւանք վաճառաբարձ ուղտերով կը մեկնէին Պաղտատէն ի Պասրա, ի Հնդկաստան, ի Տրապիզոն, ի Սըմըրղանտ, եւ Գահիրէէն կ'երթային մինչ ի Դանճէր, ուր կը յանգէր առեւտուրն Սպանիոյ։

Արհեստից եւ վաճառականութեան հետ զուգընթաց կը զարգանային դպրութիւնք, գիտութիւնք եւ գեղարուեստք։ Խալիֆայք սիրող ու խրախուսող եղան զգիր եւ դրականութիւն. սո՛ւտ է թէ Իօմէր հրամայեց հըրոյ ճարակ ընել Աղեքսանդրիոյ համբաւաւոր գրատունը. Աբբասեանք, եւ ի մասնաւորի Հարուն-էր-Րաշիտ եւ Ալ-Մամուն, դպրութեանց պաշտպանութեան մէջ խնդրեցին իրենց փառաց մեծագոյն տիտղոսը։ Ուղեւորութեան, նոյն իսկ պատերազմի մէջ, Հարունի կ'ընկերանար գիտնոց խումբ մը. հրամայեց որ մէն մի մզկիթի քով կանգնի վարժոց մը ծրի։ Մամուն ամենուրեք խուզարկել կուտար թանկագին ձեռագիրներ ու նոցա թարգմանութիւնը կը գնէր ոսկւոյ ծանրութեամբ։ Ճշմարիտ համալսարաններ կային ի Պաղտատ, ի Դամասկոս եւ ի Սըմըրղանտ, եւ միայն Պաղտատի Ուսումնարանին մէջ կ'ուսանէին տասն հազար ուսանողք։ Արաբաց աշակերտներէն մին, Սիլվեստր Բ, նստաւ Հռոմի քահանայապետութեան աթոռը։ Իրենց բանաստեղծութիւն ճոխ ու նկարագեղ էր. Հազար եւ մի գիշերներու գերահռչակ վէպն Արաբ մատենագրաց հարուստ երեւակայութեան փայլուն ապացոյցն է։ Բազմաթիւ պատմչաց մէջէ բաւ է յիշել զԱմրի, զՄասուտի, զԱհմէտ-էլ-Բաղի, զԷպն-Հայան, եւ աշխարհագիրներէն զԷտրիզի եւ զԱպու'լ-Ֆէտա։ Գիտութեանց մասին Արաբաց սէրը կ'ապացուցանէ սա արաբական առած. «Ով որ գիտութեան համար ճամբորդութիւն մ'ընէ, Աստուած կը դիւրացնէ անոր Արքայութեան ճամբան»։ Եւ արդարեւ արաբական հանճարն սիրահար էր գիտութեան. յոյն գիտնոց թողած ժառանգութիւնն ստացաւ, թարգմանութեամբք իւրացուց, մշակեց ու տարածեց։ Եւրոպա միջին դարու մէջ զԱրիստոտէլ Ապու-Վալիտ-Իպնի-Րիւշտի (Ավէրրոէս) մեկնութեամբք միայն կը ճանչէր. Ապու-Ալի-Հիւսէյինի Գանոնը ընդերկար նկատուեցաւ իբր խարիսխ բժշկական գիտութեան։ Միայն ի Պաղտատ կային 860 բժիշկք. քրիստոնեայ իշխանք կ'երթային իրենց ախտից դեղ ու դարման խնդրել Գորտովայի բժիշկներէն։ Ախտաբուժութեան ճշմարիտ ծառայութիւններ մատուցին այս բժիշկք՝ ուսումնասիրելով շատ բոյսերու բուժական յատկութիւններն։ Ապաքէն իրենց ալքիմիագէտք չյաջողեցան գտնել ո՛չ զմէջն հանքերն յոսկի փոխելու հրաշալի գործին, փիլիսոփայական քարն, որպէս կ'ըսեն, եւ ո՛չ մշտանորոգ կեանք ու երիտասարդութիւն պարգեւող դիւթական էլիքսիրն, բայց արաբ ալքիմիագէտք իրենց թորանօթներուն յատակը գտան ալքօօլն, եւ ալքիմիան ծնունդ տուաւ քիմիային։ Ո՞վ չը գիտեր թէ մեր գործածած թուանշաններն Արաբացիք ուսուցին, եւ թէ գրահաշիւն մի արաբական գիտութիւն է։ Իսկ գալով Արաբական ճարտարապետութեան, որ միայն ի գեղարուեստից կրցաւ զարգանալ, դա մի հըրաշալիք է փափկութեան, ճոխութեան, ներդաշնակութեան, ճարտարարուեստ հանճարոյ։ Մզկիթք եւ պալատք են այս արուեստի հրաշակերտք (chefs-d'oeuvre). խորհրդաւոր է քրիստոնէին զանգակը իւր աշտարակին մէջ, այլ քանի՜ն բանաստեղծական է նրբաւարտ, փափկաձեւ, երկնասլաց մինարէն, զոր յղացաւ մահմետական բարեպաշտութեան ոգին, որպէս զի միւէզզինին ձայնն ի բարձանց հռչակէ միակ Աստուծոյ մեծութիւնը։ Գահիրէի եւ Գորտովայի մզկիթներն, Սէվիլի Ժիրալտան ու Կրընատի Ալամպրան կը խօսին մեզ ցայսօր այդ արուեստին հրաշալեաց վըրայ իրենց նուրբ եւ երկայն սիւներով, իրենց սրանկիւն կամ պայտաձեւ կամարակներով, կիտուածանման քանդակներովն ու արապէսքներով։

Ահաւասիկ ինչ որ կը կոչուի արաբական քաղաքակրթութիւն, որ միջին դարու աւատական Եւրոպայի մթին քաոսին դէմ կը կանգնէր իբր փայլուն հակապատկեր, եւ որ ո՛չ սակաւ նպաստեց նորա լուսաւորութեանն ու զարգացման։

Ռ. Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՄԵԼԱՄԱՂՁԻԿ ԿՈՅՍՆ

—

Է՞ր տխուր եմ, չըգիտեմ.
Սիրտս կ'այրի. կուլամ միշտ,
Ո՛հ, հիւա՞նդ եմ, չըգիտեմ.
Սակայն գիտեմ թ'ունիմ վիշտ:

Երբ լամ, մի քիչ կամոքի
Հոգւոյս սաստիկ դառնութիւն,
Արտասուքն ինձ կը թուի
Թէ դուրս վանէ կուրծքէս թոյն:

Դիմակաւոր խորհուրդներ
Մըտացըս դէմ կուգան յար,
Դարձունելով սիրտս աւեր՝
Մասնեն յուզմանց վշտահար.

Ո՛չ երկրնքի կապոյտէն
Կ'զգամ հաճոյք խնդամիտ,
Ո՛չ ալ աչերս հրապուրեն
Ցայգոյ աստղունք լուսաժպիտ:

Ալ թո՛ղ հընչէ հըրեշտակ
Դատաստանին վերջին փող,
Մահ կը բաղձամ անուշակ
Քան կեանք չըւառ ու մաշող:

Ա. ՀԱՄԲԱՐԳԱԲՏԱՆ

ԱԶԴ

Ուսումն. Խորհրդէն վկայեալ Հայ. Ֆրանս. եւ ըստ բաւականին Անգղ. լեզուաց, նախնական ուսմանց եւ միանգամայն եկեղեցական երգեցողութեան հմուտ եւ փորձառու ուսուցիչ մը կը փափաքի պաշտօն ստանձնել մայրաքաղաքիս կամ գաւառաց ազգ. վարժարանաց մէջ։ Դիմել անձամբ կամ նամակաւ Մէրճան փողոց, Մարգարեան գրատունը։

—

Բարսեղ Էքսէրճեան. — Տարերք մայրենի լեզուի. Ա. եւ Բ. տարի։ Ա՝. 2 ղրշ, Բ՝. 3 ղրշ։ կը գտնուի ամէն գրավաճառի քով։

ԵՏՐՈՒՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԲԱՌՔ

—

Անցեալներն եւրոպական թերթեր մեզ ծանուցին թէ Դոկտոր Սոփուս Բուգգէ Նոր Հայագէտն՝ այսու վերնագրաւ հրապարակ հանած է մեր լեզուի վերաբերեալ իւր ունեցած հմտութեանց և ուսումնասիրութեանց նորագոյն մէկ արդիւնքն (1)։ Ուստի կը պարտաւորիմք հաղորդել և մեք Ծաղիկի ընթերցողաց, իբրև լրացուցիչ այն յօդուածոյն՝ զոր անկէ առաջ գրած էր մեր հմուտ բարեկամն Հ. Գ. Վ. Մենեվիշեան (2)։

Բոպ իւր Բաղդատական Քերականութեան առաջին տպագրութեան ժամանակ (1833) տակաւին չէր զբաղած հայերէնով, որուն յայնժամ հնդեւրոպական տոհմի պատկանիլն ստուգուած չէր։ Իսկ երկրորդ տպագրութեան (1857) յառաջաբանն այս տողերով կ'ըսկսի. «Առաջին տպագրութեան մէջ խօսուած լեզուաց վրայ այժմ եկաւ միացաւ հայերէնն. բայց սակայն, եզակի բացառականն ուսումնասիրած ժամանակս է... որ հաստատ միտքս դրի խորապէս քննել այդ լեզուի ամբողջ կազմութիւնը»։

Դժբաղդաբար ո՛չ Բոպ և ո՛չ ալ իւր հմուտ թարգմանիչն, Պարոն Միքայէլ Բրէալ, շատ մը սխալներէ խորշելու համար պէտք եղած ծանօթութիւնները չունէին. այդ սխալներէ ոմանք ուղղուեցան Դիւլորիէի ձեռամբ։

Պետերմանի, Դիէֆէնբախի, Վինդիշմանի և Գոշէի երկասիրութեամբք կազմեալ հայական բուն բանասիրութիւնն կ'սկսի Գէօտինգէնի համալսարանի ուսուցիչ Պարոն Պօլ դը Լագարդի ուսումնասիրութեամբք. (Տե՛ս, բաց ի Գերմանիոյ Արևելեան ընկերութեան Օրաթերթին մէջ 1850ին իւր հրատարակած յօդուածէն, յորում կը բաղդատէ հայերէն ձայնաւորներն սանսկրիտ ձայնաւորաց հետ, հետևեալ երկասիրութիւններն.— Արիք (Arica), Հալլէ, 1851, և Ի վերայ նախնական պատմութեան Հայոց (Zur Urgeschichte der Armenier) Բէրլին, 1854։

1860ին ժամանակները Վիեննայի համալսարանէն Դոկտոր Ֆրիտրիխ Միւլլեր եւս եկաւ իւր թանկագին աջակցութիւնը նուիրել հայագիտաց հետազօտութեանց, որպէս Պօլ տը Լագարդ 1877ին իւր Հայկական ուսումնասիրութեանց (Ètudes arméniennes) մէջ կրցաւ մինչև 2443 բառից ստուգաբանութեան վըրայ քննադատականներ գրել։ Զայս եւս յաւելումք առ տեղեաւս՝ թէ հայերի արմատական բառք 5000է աւելի հաշուուած են, բայց պէտք է խոստովանիլ թէ այս հաշիւք տակաւին շատ կանխահաս են։

Ստրասբուրգի համալսարանէն Պրոֆ. Հիւբշման հակառակեցաւ այն ընդունուած կարծեաց թէ, հայերէնն իրանեան գաւառաբարբառ մ'է։ 1875ին Kuhn's Zeischriftի մէջ գրած մի յօդուածէն յետոյ, յորում կը խօսէր հայերէնին հնդևրոպական լեզուաց տոհմին մէջ գրաւելիք պատշաճ տեղւոյն վրայ, 1877ի Գերմանիոյ Արևելեան ընկերութեան Օրաթերթին մէջ հրատարակած ուրիշ յօդուածով մ'ալ ցոյց տուաւ թէ հին հայերէնն ի՞նչպէս պէտք է հնչել. որոյ ի շարունակութիւն, հըմուտ հնագիրն Վ. Գարթաուսին Մեսրոպեան տառից շատերուն յունական ծագում մ'ունենալը ցոյց տուաւ։ Վերջապէս, 1883ին, Հիւբշման՝ ի լատին տառս վերածման դրութիւն մը հնարելէ յետոյ, իւր Հայկական ուսումնասիրութեանց առաջին հատորն հրատարակեց, յորում ձայնական համառօտ տեսութենէ մը զատ 299 բառից ստուգաբանութիւնը կուտայ, իւր նախորդաց հետազօտութեանց արդիւնքէն դուրս կը ձգէ՝ իրանեան լեզուներէն փոխ առնուած շատ մը բառեր, և հետևաբար զհայերէնն իրանեան լեզուաց համացեղ չ'ընդունիր։ Այս կերպիւ կուգայ, կը հանի այն եզրակացութեան թէ հայերէնն հնդևրոպական տոհմին ինքնուրոյն մէկ անդամն է, և զայն պէտք է զետեղել մէկ կողմէ սանսկրիտ-իրանեան լեզուաց մէջ, միւս կողմէ Սլաւա-լիթուանեան լեզուաց մէջ։

Անցեալ տարի, Քրիստիանիոյ համալսարանին ուսուցիչ Դոկտոր Ելեւս Սոփուս Բուգգէ, արևելագիտաց Համաժողովյն առթիւ, իւր քաղքին գիտութեանց ընկերութեան 114 յօդուածներով ստուգաբանական հմտալից աշխատութիւն մը ներկայացոյց։ Պրն. Բուգգէ բուական ժամանակէ վեր կը պարապի, ի մէջ այլոց, իտալական լեզուաց, մանաւանդ ոսկեան (Osque) և ետրուրական (étrusque) լեզուաց։ Ուստի, Դէէքէի Ետրուրական հետազօտութեանց եւ ուսումնասիրութեանց ձեռնտու լինելէ յետոյ, 1886ին գիրք մը հրատարակեց յաղագս Ծագման Ետրուրականաց, բացատրեալ յերկուց արձանագրաց Լեմնոսի։

Մինչև ցարդ, շնորհիւ Կորսենի, Կարլ Պաւլիի, Գարթաուսենի, Դէէքէի և այլոց հմտալից աշխատութեանց, կը կարծուէր թէ ետրուրական լեզուն իտալական խմբին մէկ մասը կը կազմէ։

Կէմբրիջի Սէյնտ Ջօնս համալսարանէն (1820-1885) փոխանեալ Պրն. Ռոբերտ Էլլիսը փորձ փորձեց մօտեցնել ետրուրերէնն հայերէնի. (Տե՛ս Հայկական ծագումն Ետրուրականաց (The Arménien Origin of the Etruscans), Լոնտոն, 1861. բազմաթիւ մանր գրուածներ թուական անուանց վրայ, և իւր մահուանէն ետք հրատարակեալ աշխատութիւնն, Աղբիւրք Ետրուրական եւ Բասկեան լեզուաց (Sources of the Etruscan ond Basque Languages), Լոնդոն, 1886.). բայց որովհետեւ նա իւր բաղդատութեանց մէջ կարգ մը բոլորովին օտար լեզուներ կը խառնէր, իւր եզրակացութիւնք գիտնոց ծիծաղն և եթ շարժեցին։

Այսօր Պրն. Բուգգէ վերստին ձեռք կ'առնու ետրուրերէնի՝ հայերէնի հետ ունեցած ազգակցութեան խնդիրը, բայց աւելի՛ գիտական, աւելի՛ ահեղ գործիքով մը, որ ճըշմարտութեան բոլոր երևոյթներումն աւելի բանադատիչ կը դառնայ ընթերցողաց։ Հեղինակը կ'ընդունի նախնեաց այն աւանդութիւնը թէ Ետրուրացիք Լիւդիայէն, այսինքն վաղնջական Ասիայէն եկած են։ Իւր այն կարծիքը կը հիմնէ ետրուրերէնին աչքի զարնող մերձաւորութեանց վրայ, հայերէն մանաւանդ ռամկական գաւառաբարբառներուն քան թէ գրաբարին։ Այս նպատակաւ իրեն օժանդակ առած է Պատկանեանցի, Պետերմանի, Սարգսեանցի, Տոմսընի, Հանուշի հետազօտութիւնները, ընդ որս կրնար յաւելուլ նաեւ Ուլնիոյ գաւառաբարբառն, նկարագրեալ յԱլլահվերտեանէ։ Իւր այս նոր գրոց մէջ ոչ միայն առանձին բառերը կը բաղդատէ, — որպէս՝ էրուս=արև, լուսննէի=լուսնկայ, տուրչէ=տո՛ւր տալչէ=տալ, ևայլն, — այլ և կը քննէ մանրամասնաբար գոյականաց ու բայից քերականական վերջաւորութիւններն, բառից կազմակերպութիւնն, վերջադիր մասնիկներն, նշանագրոց տեղափոխութիւնն և յարադրութիւնը, բառից կրճատեալ ձևերը, ձայնական չեշտերն, ևայլն։ Այս կերպիւ կը գտնէ ետրուրերէնի բայական չէ մասնիկն (զորօրինակ՝ արչէ=արար (առնեմ բայէն) Ախալցխայի գաւառաբարբառին մէջ (կը, գը. ըստ Զրպետի՝ խը) և խա սեռականն հայերէն եայ ի մէջ։

Կ. ԳԱՂԱՏԱՅԻ

(1) Etruskisch und Armenisch. Erste Reiche, Christiania, 1890.

(2) Այդ յօդուածոյն նիւթն էր Բուգգէի Հայերէն լեզուի ստուգաբանութեան ուսումնասիրութիւնք (Beiträge zur etymologischen Erläuterung der armenischen Sprache, 1889) անուն գործն։ Տե՛ս ի Հանդէս Ամսօրեայ, Դ. տարի, 3 թիւ.

ԿՐԹԱԿԱՆ

—

(Շար. եւ վերջ)

Հակառակ շատ մը աննպաստ պարագաներու, որոց մէջ իւր առաջնութեամբ կը փայլի նիւթականի անբաւականութիւնն, ամէն թաղային վարժարան կը ձգտի միջնակարգ ուսումնարան մը դառնալ. իւրաքանչիւրն ունի իրեն յատուկ ծրագիր, և հոգաբարձութեան մ'արժանիքն այնչափ աւելի կը գնահատուի, որչափ իւր պատրաստած ծրագրոյն ուղիներն ըստ կարելւոյն բազմաթիւ են։

Դժբաղդութիւնն հոն է որ գրեթէ ամէն թաղի մէջ հոգաբարձու մարմինն դպրոցական խնդրոց մասին Թաղ. Խորհրդէն աւելի բանգէտ կը համարուի և իրօք ալ այնպէս է. որով այս վերջինը Հոգաբարձութեան վրայ ունեցած իրաւասութենէն կը զրկուի. Հոգաբարձութիւնն ալ ո՛և է պատասխանատուութենէ զերծ մնալով իւր ուզածին պէս կը գործէ, մինչդեռ ըստ Սահմանադրութեան՝ Հոգաբարձութիւնք Թաղ. Խորհրդոյ հսկողութեան ներքև գործող և անոնց պատասխանատու մարմիններ լինելու էին. Թաղ. Խորհուրդք ալ իրենց կարգին, եկեղեցական, դպրոցական, և թաղային ամէն գործոց մասին պատասխանատու պէտք էր լինէին Ազգ. Կեդր. Վարչութեան. բայց մեր Թաղ. Խորհուրդներէն քանի՞նը այս երեակ տեսակէտով տարեկան տեղեկագրեր կը մատուցանեն Վարչութեան։ Որչափ որ գիտենք՝ անոնց մեծագոյն մասը քանի մը տարին անգամ մը Տնտես. Խորհրդին եկամտից հաշուեկշիռ մը ներկայելով կը շատանայ. կը հետևի ուրեմն թէ, ինչպէս Հոգաբարձուք՝ նոյնպէս և Թաղ. Խորհուրդք, հակառակ Սահմանադրութեան բացորոշ տրամադրութեանց, գրեթէ ինքնագլուխ կը գործեն ի մեզ, որով Ուսումնական Խորհրդոյ պաշտօնն ալ ամլութեան կը դատապարտուի։ Ցօրէ անտի հաստատութեան Ազգ. Սահմանադրութեան՝ Ուսում. Խորհուրդն գոյութիւն ունի. ի՞նչ ըրաւ այսչափ երկար ժամանակամիջոցի մէջ — Քանի մը ծըրագիր և բարեկարգութեան հրահանգ պատրաստեց, որոց ո՛չ մին գործադրուեցաւ. վերջերս ալ վկայականներ բաշխեց արժանաւոր թէ անարժան ուսուցչաց և դասագրքեր վաւերացոյց, իսկ անկէ զատ ոչինչ։ Աւելին կա՞րող էր ընել — բնականաբար ոչ. ըստ որում պաշտօնական մարմնոյ վրայ զօրութիւն չունի, այդ իրաւունքը միայն տեսականապէս կը վայելէ։

Թաղային պաշտօնական մարմնոց միայն ա՛յն ժամանակ ինքնօրէն գործելու իրաւունք

պէտք է տրուի՝ երբ իրենց յանձնուած գործն յաջողութեամբ ի գլուխ հանելու կարողութիւնն ունին։ Մեզ նման տգէտ ազգի մը համար կարելի՞ է ըսել թէ ամէն թաղի մէջ դպրոցի լեզուէ հիմնապէս հասկցող 4-5 անձինք կը գտնուին. քանի որ այդ բան կը պակսի մեզ՝ պէտք է ամէն ուղղութիւն կեդրոնէն տրուի։ Ծրագիր, պիւտճէ, ևն. կեդրոնէն մատակարարուելու են. Վարչութիւնը թաղային գործոց գէթ դպրոցական ճիւղին վրայ կատարեալ Կօնթրօլ պէտք է ունենայ։ Հոգաբարձութիւնք և Թաղ. Խորհուրդք պարզապէս գործադիր իշխանութիւններ նկատուելու են, որոց պարտականութիւնն լինի Ուսումն. Խորհրդոյ հրահանգներն խղճի մտօք գործադրել առանց իրենց քովէն խելք խառնելու։ (1)

Եթէ Վարչութիւնն կարող է իւր Կօնթրօլի իրաւունքը լսելի ընել որոց որ անկ է, յայնժամ վարժարանաց արդի վիճակին տակաւ բարւոքմանը կրնամք յուսալ. թէ ոչ՝ մեր անուսութիւնք չաղակրատութեան կարգն անցած կը լինին։ Արդ ենթադրելով թէ կեդրոնն ունի այդ կարողութիւնը՝ կը մնայ գիտնալ որ ի՞նչ միջոցներով վարժարանաց արդի կացութիւնն ի լաւ անդր պիտի բարեփոխի։

Քանի որ վարժարանաց ուղղութիւնը և հետևաբար նոցա բաղդն Ուսումն. Խորհրդէն կախումն պիտի ունենայ, սորա պաշտօն շատ աւելի կարևոր, դժուարին և նուիրական կը դառնայ քան զոր այժմս կ'ըմբռնեմք. ուստի այս Խորհրդոյն անդամակցողք գերազանցապէս յարմարութիւն ունենալու են իրենց պաշտօնին։ Սխալ է կարծել թէ առհասարակ ամէն ուսեալ մարդ յարմարութիւն կրնայ ունենալ այնմ։ Խմբագիր մը, Բժիշկ մը, թէպէտ շատ ուսեալ՝ այլ ո՛չ անպատճառ հմուտ կը համարին Դպրոցական լեզուին. այդ լեզուն առաւելապէս մանկավարժները կը հասկնան և կամ ամէն անոնք՝ որք ի բնէ մանկավարժական ձիրքերով են օժտեալ։

Արդ պէտք է որ Ուսումն. Խորհրդոյ մէջ գտնուի գոնէ մէկ առաջնակարգ մանկավարժ, և միւս անդամակիցք մանկավարժութեան յարմարութիւն ունեցող մարդիկ լինին, որք առանց յամառելու իրենց ոչ-այնչափ հիմնական տեսութեանց վրայ՝ հետևող լինին մեծ մանկավարժին։ Եթէ այդպիսի ոք չը գտնուիր ի Պոլիս, պէտք է այլուր փնտռել, վճարել նմա. միթէ աւե՞լորդ ծախք մը ըրած կը լինին. ո՞չ ապաքէն այժմ կրթական Տեսչին կը վճարեմք։

Անգամ մ'որ Ուսումն. Խորհուրդն այսպիսի լաւ կերպով կազմակերպուի և մեր ենթադրած պայմանաց ներքև գործէ, ալ մեր կողմանէ՛ ո՛ և է խորհուրդի կամ աջակցութեան չը կարօտիր և իւր ընելիքը շատ լաւ գիտէ. բայց քանի որ գէթ առ այժմ երազներ են ասոնք, կը համարձակիմք անմիջական բարենորոգմանց մասին մեր տեսութիւնները պարզել, Պատուարժան Թաղ. Խորհրդոց և Հոգաբարձութեանց լուրջ ուշադրութեանը յանձնելով զայնս։

Քանի որ ուսումնարանական կարգաց պատճառաւ բնակելարանի և նախակրթարանի սանուց պէտք եղած հոգածութիւնը չեն վայելեր, քանի որ վարժարանաց նիւթական կացութիւնը չը ներեր նախակրթարան թէ ուսումնարան համանգամայն բարւոք կացութեան մը վերածել, քանի որ նախակրթարանաց պիտոյք անտես լինելով՝ ուսումնարանք ակնկալուած արդեանց չեն համապատասխաներ, լաւագոյն չէ՞ միթէ թաղային վարժարաններէն Ուսումնարան կարգերն իսպառ ջնջել և մեր ոյժերն կեդրոնացնել Ծաղկոցի և Նախակրթարանի վրայ։

Ծաղկոցի և Նախակրթարանի այժմու ծրագիրք բոլորովին անհամաձայն են մանկավարժական օրինաց. հասարակ ընթերցանութեան, լեզուաց և գիտութեանց դասաւանդութեան եղանակն, նոյն իսկ երգեցողութեան ուսուցումն պէտք է մանկավարժական լինի։ Կը հասկցուի ուրեմն թէ դաստիարակներու ցանկէն կառավարիչներն արտաքսել կ'ուզեմք, որոնք թէ՛ իրենց անձին և թէ՛ Ազգին կը վնասեն. կը վնասեն իրենց անձին՝ որովհետև իրենց պաշտօնին անհմուտ լինելով չափազանց կը հոգնին և իրենց կեանքը կը նուազեն. կը վնասեն Ազգին՝ որովհետև իրենց խնամոց յանձնեալ մանկտին մտաւորապէս կ'սպաննեն։ Ըստ մեզ՝ այբուբենէն սկսեալ ամէն առարկայ մանկավարժական դրութեամբ ուսուցանելու է. Ծաղկոցի և Նախակրթարանի մէջ աւանդուելիք առարկայները լինելու են հայերէն, թուրքերէն, կրօնք, պատմութիւն և իրագիտութիւն՝ որ իւր մէջ ունի ամէն ուսմանց վրայ նախնական գիտելիք։ Մասնաւոր ոյժ տալ պէտք է պատմութեան, կրօնագիտութեան, նա մանաւանդ իրագիտութեան։ Գրաբար լեզուի ուսուցումն ուսումնարանաց վերապահելով, նախակրթարանի աշակերտին ընդհանուր քերականութեան սկզբունքներն և հայերէն աշխարհաբար քերականութեան կանոններն աւանդելով շատանալու է. ընդհանուր քերականական սկզբանց ուսուցման համար մասնաւոր դասագրքի պէտք չը կայ. մանկավարժն հասարակ ընթերցանութեան դասերն աւանդած ատեն զանոնք կը սորվեցնէ. աշակերտն նոյնպէս այս դասերուն ատեն բառերու քերականական օրինօք կիրառութիւններն դիւրաւ կ'ըմբռնէ մանկավարժին ճարտարութեամբը, և յետոյ երբ աշխարհաբար քերականութիւն ունի՝ արդէն մեծ մասամբ տեղեակ է կանոնաց, ամէն ինչ բնական կը թուի իրեն, իբր թէ քաղուածք մը կ'ընէ։ Կրօնագիտութեան, պատմութեան և իրագիտութեան համար ևս մասնաւոր դասագրքի պէտք չը կայ (մեր խօսքն աշակերտին համար է, ի հարկէ ուսուցիչն պէտք է ունենայ իրեն առաջնորդող դասագրքեր)։ Կրօնագիտութիւն և աստուածաբանութիւն, եկեղեցական պատմութիւն և ծիսագիտութիւն իրարմէ տարբեր բաներ են. այն կարգ մը անյարմար և հակամանկավարժական դասագրքերն զորս Քրիստոնէական կը կոչեմք՝ բոլորն իրար կը խառնեն, որով անօգուտ և վնասակար իսկ են. աշակերտին պէտք է սորվեցնել սուրբ գրոց պարզ և մանրամասն պատմութիւնը մասալի ձևով, և տալ հետ մէկտեղ բարոյական փիլիսոփայութեան սկզբունքներն. փիլիսոփայութիւն բառէն մի խրտչիք. տղայք ևս կրնան ըմբռնել զայն երբ պէտք եղածին պէս բացատրուի. արդէն փիլիսոփայութիւնը «ինչո՞ւ» բառին պատասխանն է. արդ այս «ինչո՞ւն» ամէնէն աւելի տղայք են որ կը գործածեն. տղայք մեզմէ աւելի փիլիսոփայ են։

Ամենադժուար խնդիրը իրագիտութեան մէջ կը կայանայ. զի զայն աւանդող ուսուցիչն պէտք է առ հասարակ ամէն բանի վրայ նախնական գաղափար ունենայ. գիտութիւնք և արհեստք իրեն համար գաղտնիք ունենալու չեն. մէկ խօսքով մանկավարժ պէտք է։

Թո՛ղ բնաւ չ'առարկուի թէ մեր առաջարկած բարենորոգմունք մեծաքանակ դրամի դուռ կը բանան։ Միջին հաշուով մեր վարժարանք այժմ ամսական երեսուն ոսկւոյ ծախք ունին. արդ սոյն գումարով կարելի է երեք միայուն մանկավարժ ունենալ, և այս բաւական է, ըստ որում միջին հաշուով երկսեռ աշակերտաց թիւը 100 ը չ'անցնիր։

Պիտի առարկուի թէ ուրկէ՞ գտնանք մանկավարժ։ — Առ այժմ գտնուած լաւագոյն դաստիարակներովն գոհ լինել պէտք է. մեր մէջ մանկավարժութեան յարմար ուսուցիչներ պակաս չեն. ապագային մէջ շատեր պիտի ունենամք՝ երբ լաւ վճարեմք։ Տասն կամ տասն և հինգ ոսկւոյ ամսաթոշակն բաւական հրապուրիչ է մանկավարժից լեգէոններ արտադրելու համար։

Մեծ բան մը մոռցանք — հապա եկեղեցական երգեցողութի՛ւնը. ա՛խ այն երգեցողութեանն համար չէ՞ որ կառավարչական դրութիւնն հաստատուած է. Աստուած միայն գիտէ թէ այդ երգեցողութեան համար ո՞րչափ վրայ տուինք։ — Համալսարանական մանկամարժք երգեցողութեան ալ հմտութիւն ունին և եկեղեցական երգեցողութիւն ուսնիլն իրենց համար երկու ամսոյ գործ է, ըստ որում ձայնագրութեան տեղեակ են. բայց մինչև որ մանկավարժներն պատրաստենք՝ երգեցողութեան ուսուցիչ մը թո՛ղ այցելութեամբ այդ դասն աւանդէ։

Գալով ուսումնարանաց, ատոնք միայն բազմահայ կեդրոններու մէջ հաստատուելու են։

Լ. Մ.

(1) Ուսումն. Խորհուրդն ալ իր պաշտօնին ձեռնհաս, իւր պարտականութեանց խելամուտ, դպրոցական գործոց մասին լիակատար հասկացողութիւն ունեցող Ուսումն. Խորհուրդ լինելու է։ Ծ. Խմբ.

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

Ոստիկանութեան Նախարարութեան կողմէ հետևեալք հրատարակուեցաւ երեքշաբթի աւուր թուոց լրագրաց մէջ.

Յակոբ Վարդ-Պատրիկօֆ անուն խռովարար մը մէկ քանի ամիս առաջ մայրաքաղաքս եկած և Իրաւագիտական վարժարանի աշակերտներէն Տիվրիկցի Գրիգոր, Ղալաթիոյ թղթատարատան ցրուիչներէն Արմենակ, քաղաքային բժշկական վարժարանի աշակերտներէն Համբարձում Պօյաճեան և դատարկաշըրջիկ Մարգար ու Երեմիա անուն երիտասարդները խաբելով, ասոնցմէ և ուրիշ մէկ քանի անձերէ բաղկացեալ ոճրագործական մասնախումբ մը (Քոմիթէ) կազմած էր իւր նախագահութեան ներքև։ Այս անձ «Պոլսոյ Եղեռնական Մասնախումբ» անուամբ կնիք մը փորագրել տուած և ատով սկսած էր հարուստներէն ստակ կորզելու նպատակաւ այլ և այլ սպառնալիքներ պարունակող նամակներ կնքել, դրամներ պահանջել եւ կայս. հաւատարիմ հայ հպատակներն աղարտել այլ եւ այլ հրատարակութեամբք. նոյնպէս ստակ և տեղ չունեցող գաւառացի հայ տղաքներ խաբելով ոճրագործութեան մղել և այսպէս ժողովրդեան մէջ կարգ մը սուտ զըրոյցներու տեղի տալ։

Ոստիկանութիւնը, շնորհիւ Վեհ. Սուլթանին, յետ քննութեան ստուգած է վերոգրեալ պարագայներն, և վերյիշեալ վնասակար անձերը, բաց ի Համբարձումէ ու Երեմիայէ, ձերբակալած է, ինչպէս նաև այդ մասնախմբին կողմէ իբրև ոճրագործութեան գործիք գործածուած անձերը։

Ոստիկանութիւնը նոյնպէս երէկ ձերբակալած է քսան քսանևհինգ օր առաջ Թաքքէճի Թաղին մէջ դաշոյնով մը փաստաբան Խաչիկ էֆէնտին սպաննողն, որ է Արմենակ անուն 16 տարեկան պատանի մը, որդի ի Պէշիքթաշ Սարգիս պէյի կալուածոց մէջ բնակող հնակարկատ Մկրտիչի։ Արմենակ հարցաքննուելով ըսած է թէ վերոյիշեալ անձերէ Համբարձում, Գումգաբուի զառիվերին վրայ իրեն հինգ ոսկի տուած և գրգռած է զինքն՝ սպաննելու փաստաբան Խաչիկ էֆէնտին։ Արմենակ յարած է նաև թէ ինք իւր ամբողջ կենացը մէջ այդչափ դրամ մէկտեղ տեսած չը լինելով, ստիպուեր է՝ եղած առաջարկութիւնն ընդունիլ և այդ ոճիրը գործեր է։ Այս նախնական քննութեանց արդիւնքը պիտի հաղորդուի Դատական Նախարարութեան։

Մասնախմբին կնքոյն հետ գրաւեալ Թուղթերէ ու Նամակներէ հաստատուած է թէ այդ եղեռնական մասնախումբ՝ միանալով Հնչակ և այլ այդ կարգի լրագրոց վարչութեանց հետ, վերոյիշեալ խռովութեանց ու ոճրագործութեանց ձեռնարկած է՝ միայն նպատակ ունենալով կայս. կառավարութեան հայ հպատակներէն դրամ կորզել զաղտնի սպառնալեօք։

Համբարձում, Մարգար և Երեմիա ևս, շնորհիւ Վեհ. Սուլթանին, ամէն պարագայի մէջ պիտի ձերբակալուին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայս. հրամանաւ, Միլքիյէ վարժարանին մէջ պարտաւորիչ եղած է հայերէն և յունարէն լեզուաց ուսումն։

— Կը յուսացուի թէ Յունաց պատրիարքարանի խնդիրք ի մօտոյ գոհացուցիչ լուծում մը պիտի ստանան։

— Բիւրտ Մուսա պէյ կիրակէ օր ընդ հըսկողութեամբ Մէտինէ ղրկուեցաւ Մախսուսէի Քեամիլ փաշա շոգենաւով։

— Եէտի-Գուլէի Նորակառոյց կազարանին բացումը երկուշաբթի օր տեղի ունեցաւ։

— Զուճուր, գրաքննիչ պաշտօնէին զեկուցմանց հակառակը վարուած լինելով, անպայման կերպով դադարման դատապարտուեցաւ։

— Սելանիկ-Մանասթրի երկաթուղւոյն շինութեան ի մօտոյ պիտի ձեռնարկուի։

— Հանրածանօթ ակնաբոյժ Տօք. Էսմէրեան էֆ. Բարիզէն մայրաքաղաքս վերադարձաւ։

— Վերջնական կերպիւ որոշուած է որ Մուտանիա-Պրուսա Քէօթահիոյ երկաթուղւոյ ծրագրին հեղինակ Պ. Նակէլմաքէրս ամրական բացութեամբ պիտի շինէ այդ գիծը։ Ելմտական Նախարար Վսեմ. Յակոբ փաշա Նախարարաց Խորհրդոյ կիրակի աւուր նըստին մէջ յայտնեց անուանքն այն տեղերու որոց տասանորդի տրոց հասոյթք պիտի յատկացուին մէն մի քիլոմեդրի համար արտօնատիրոջ տրուելիք 13,000ական ֆրանքի երաշխաւորութեան։

— Փոքր-Ասիոյ երկաթուղւոյ գիծը, որուն շինութեան մենաշնորհը կը խնդրէ Պ. Նակէլմաքէրս, մօտաւորապէս 800 քիլոմեդր երկայնութիւն պիտի ունենայ։ Այդ գիծ պիտի բաժնուի երկու մասի՝ Ա. երկաթուղի մը Պրուսայէն մինչև ի Մուտանիա կամ ծովեզերեայ ուրիշ քաղաք մը. Բ. երկաթուղի մը Պանտըրմայէն կամ Միխալըճէն (Ապուլօնեա լճին վրայ) մինչեւ Գոնեա, որ պիտի հանդիպի Պալըքէսէր, Սիմաու եւ Աֆիոն-Գարահիսար։ Պ. Նակէլմաքէրս կը խնդրէ որ նախապատուութիւն տրուի իրեն՝ Իսկէնտէրունի ծոցին վրայ Բայաս կոչուած ծովախորշէն մինչև Գոնեա երկաթուղւոյ մը շինութեան համար։ Եումուրթալըք կոչուած տեղն որ կը գտնուի այդ ծովախորշին վրայ, ծովեզրէն մեկնող գծերուն կեդրոնը պիտի ըլլայ։

— Կ. Պօլսոյ քարափանց շինութեան մենաշնորհի ծրագիրը կ՚առաջարկէ քսան կանգուն լայնութեամբ քարափ մը շինել Ոսկեղջիւրի երկու ափանց վրայ, մէկ կողմէ՝ Թօփհանէէն մինչև Ազապ-Գաբու և միւս կողմէ՝ Սիրքէճիէն մինչև Ուն-Գաբան։ Քարափին վրայ լայնանիստ մայթ մը պիտի գտնուի հետիոտն ընթացողաց համար, և մայթին երկայնութեամբ ծառեր պիտի տնկուին։ Քարափին երկայնութեամբ երկաթուղի մը պիտի շինուի և շոգեշարժ Թրամուէյ մը դիւրութիւն պիտի ընծայէ անցորդաց և ապրանաց փոխադրութեան։

Քարաքէօյի կամուրջն իւր տեղէն չպիտի խախտի. սակայն միջոցներ ձեռք պիտի առնուին դիւրացնելու համար անոր բացումը նաւերու առջև՝ որք հիմակուընէ աւելի յաճախակի անցուդարձ պիտի ունենան քարափանց շինուելէն յետոյ։ Քարափանց շինութիւնն երբ աւարտի, մեծ կերպարանափոխութիւն մը յառաջ պիտի բերէ նաւահանգստին մէջ։ Թէպէտ նաւերուն համար պարտաւորիչ չպիտի ըլլայ քարափանց եզրը հանդիպիլ ու հոն խարիսխ նետել, այսու հանդերձ անոնց մեծագոյն մասն անշուշտ նախամեծար պիտի սեպեն այս եղանակը որ ամենամեծ դիւրութիւններ կ՚ընծայէ ապրանք բեռցնելու կամ հանելու համար։ Այս նպատակաւ ընդհանուր մթերանոցներ պիտի շինուին քարափանց վրայ։

— Կիւրակէ աւուր Թուրք լրագիրք հրատարակեցին հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը։

Յայտնի է ամենեցուն թէ, Յունաց Ամեն. Պատրիարքն՝ հրաժարեալ ըլլալուն պատճառաւ արգիլած է քահանայից Յունաց եկեղեցիներու մէջ կրօնական արարողութիւն կատարել։

Զարմանք ոմանք, թէև՝ այս արգելքը կայս. կառավարութեան մէկ հրամանին վերագրելով այլ ընդ այլոյ անհիմն զրոյցներու տեղի կուտան, սակայն կայս. կառավարութիւնը մին. եւ ցայսօր անվթար պահած է այն ազատութիւնը զոր ի վաղուց անտի շնորհած է բոլոր կրօնքներու, և ամէն ոք ազատ է, ըստ իւր կրօնի, աղօթել և կրօնական արարողութիններ կատարել։ Հետեւաբար ասոր հակառակ շրջած զրոյցները կը հերքուին։

— Պօլսոյ Ապահովութեան Ընկերութիւնը վազթ չեղող և լոկ միւլք եղող ամէն տեսակ անշարժ կալուածոց փոխարէն դրամ փոխ պիտի տայ յետ այսորիկ։

— Պ. Քօնտէսինի (Օտեսայէն) վերջին օրերս ուղևորութիւն մը կատարելով ի Կովկաս, պայմանագիր կնքեր է՝ 10,000 չէրքէս գաղթականներ Թուրքիա փոխադրելու համար։

— Մարաշէն կը գրեն թէ տեղւոյն կառավարիչ Սալիհ փաշա որ Զէյթուն գնացած էր կարևոր խնդրոյ մը վրայ քննութիւն բանալու համար, իւր պաշտօնն աւարտելէ յետոյ Մարաշ դարձեր է։ Սալիհ փաշա իւր տեղեկագիրն յղեր է Հալէպի կուսակալին և ի մօտոյ ինք անձամբ Հալէպ պիտի ուղևորի, այս մասին բանակցելու համար կուսակալին հետ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Գոհութեամբ կը ծանուցուի թէ Կարնոյ Հայ բանտարկեալք կայսերական ներման արժանացած լինելով, խմբովին արձակուեր և կառավարական պաշտօնատունն երթալով, իրենց երախտագիտական ու հաւատարմական զգացմանց հաւաստիքը մատուցեր են առ Վսեմ. կուսակալն։ Առաջ. Տեղապահ Գեր. Ղևոնդ եպիս. Շիշմանեան այս առթիւ բարեմաղթութիւններ ըրեր է վասն կենաց և բարօրութեան Վեհ. Սուլթանին, և արձակեալք ձայնակցեր են այս մաղթանաց։

— Վեհ. Սուլթանը բարեհաճած է առաջին կարգի Օսմանիյէ պատուանշան շնորհել Աղթամարայ Կաթողիկոս Ամեն. Խաչատուր Սրբազանին, չորրորդ կարգի Մէճիտիյէ՝ Վարագայ վանուց փոխ-Վանահայր Արժ. Մեսրոպ վարդապետին և Կտուցի Վանահայր Արժ. Մատթէոս վարդապետին, ինչպէս նաև Սալիհէի ատեան՝ Վանայ Նահանգին Իտարէի ժողովոյ անդամներէն Կարապետ և Մկրտիչ էֆէնտիներու, Վերաքննիչ ատենի անդամներէն Սահակ և Գէորգեան Կարապետ էֆէնտիներու, Թաղապետութեան ժողովոյ անդամներէն Հաճի Արսլան ու Գալչեան Մկրտիչ էֆէնտիներու, և տեղւոյն երևելիներէն Խանճեան Կարապետ ու Բոտիչեան Աւետիս էֆէնտիներու։

— Եկեղեցական հարց բաղձանացը համաձայն, Եկեղեցական Համագումար ժողովն ի նիստ պիտի գումարի յառաջիկայ երեքշաբթի օր ժամը 5 ին ի Պատրիարքարան, հրաւիրմամբ Ատենապետ Գեր. Գրիգորիս եպիսկոպոսի Ալէաթճեան։

— Քըրք Աղաճի ազգայիններէն Մեծ. Եբուանդ էֆ. Մելիքեան մէկ օրինակ ....կան «Ծաղիկ» նուիրեց տեղւոյն Նարեկեան վարժարանին։

— Ստացանք Ազնուաշուք Մամուրեան Մատթէոս էֆէնտիի Արևելեան Մամլոյ սեպտեմբերի ամսաթիւը։ Կը պարունակէ 1. Խաւարէ ի լոյս մէկին չարունակութիւնը, 2. Ազն. Պէրպէրեան էֆէնտիի հաւակ բանք առ ուսումնաւարտս 1890 ամի, 3. Վարդ եւ սոխակ, Յիսուս եւ բնութիւն բանաստեղծութիւններն, 4. Իտալիոյ թագաւորն ու թագուհին, 5. Փերանէ, 6. Քանիմի հետաքրքիր Ազգային Երեէրդ, 7. Խմբագրական՝ ծայրայեղ քննադատութիւնք, 8 Շահնուրեան համով հատով բդրակցութիւն մը 9. Լրաքաղ, 10. Բաղաքական։

ԴԱՏԱՎՃԻՌ

Եղեռնադատ ատեանն հինգշաբթի օր վերստին զբաղելով Հայ ամբաստանելոց ծանուցեալ դատով, արձակեց իւր վճիռը, որուն համեմատ՝ ամբաստանեալներէն Յակոբ, Փիլիպպոս Ցարութիւն և Նշան մահուան դատապարտուած են, Մինաս և Վարդան՝ եօթնական տարւոյ բերդարգելութեան, և Համբարձում, Յովակիմ, Աւետիս և Պետրոս՝ հինգական տարւոյ բերդարգելութեան։

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ

Օսմ. լիրան 100 ղրշ. էն

Մէճիտիյէ	107 30	Ռուսիոյ բօլ	91 25
Մէթալիք	100 10	Նաբոլէոն	87 8
Պէշլիք, Ալթըլըգ	102 30	Գրիմից	51 15
Քառորդ մէճիտ	109 30	Անգղ. լիրա	110

Մանէթ թղթադրամ 7 62

Գոնսոլիտէ (երեկոյ.)	19 24	Ռում. Երկ բաժին	78 3/4
Նոր փոխա. 4 օ/օ		Թղթադրամ (Թուս.)	13
(Թահվիլաթը Օսմ.)	80	Ներքին փոխառ.	60

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ՍԱՔԱԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Էսկի զապթիյէ ճատտէսի, թիւ 61